№ 289 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 289

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թեֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆոն № 67.

„ՄՇԱԿԻ" ԳՐԱՍԵՆԵԱԿԻՑ

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեան գրասենեակը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանօնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչևսկայա 13, տելեֆոն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից), վաղօրօք գրվելու պայմանով։

Ընդունելութիւն կանացի, ներքին և մանկական հիւանդութիւն ունեցող երթևեկ հիւանդների, ամեն օր՝ ցեր. ժամը 11-ից մինչև 12-ը։

Ընդունելութիւն պրոֆ. Մ. Ս. Սուբբոտինի կողմից՝ վիրաբուժ. կարիք ունեցող հիւանդների, վաղօրօք գրվելու պայմանով, երկուշաբթի և հինգշաբթի օրերը ցեր. ժամը 1—2-ը։

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Ցալուժինեան, Ն. Ն. Վեսելովզորով, Վ. Ա. Ջակրժևսկի, Ի. Գ. Կալամկարեան, Ա. Ա. Նովիցկիյ, Գ. Ն. Տէր-Ներսէսեան, Ն. Զ. Ռամիկեան, Ա. Ր. Փիշէր, Ս. Պ. Շահպարոնեանց. Կօնսուլտանտ՝ պրօֆեսոր Մ. Ս. Սուբբոտին։

(հ.կ.) առ. 787. 100—18

✦ ՆՈՐ-ՅԱՐՎԱԾ ՅԱՐՄԱՐ ՆՈՒԷՐ ✦
Վիեննայի «Գրաֆիշէ Իստիտուտի» կայս. Ընկ. տպարանից լոյս տեսաւ Բ. տպագր.
Նկարիչ Ա. ՖԵԹՎԱՃԵԱՆԻ
ԱՆԻԻ ԳՈՒՆԱՏԻՊ
ԱԼԲՈՄԸ
Գինն է 1 ր. 20 կ.։ Դիմել «Գուտտենբերգ» գրավաճառանոցը։ Մեծաքանակ առնողներին 20% զեղչ։ առ. 974. 6—4

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
ներքին հիւանդութիւններ՝
առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի։
Բժշկութիւն նաև տուբերկուլիններով, ՌԱԴԻԻ պրէպարատներով և էլեքտրականութեամբ։
Ընդունելութիւնը ամեն օր, ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
առաւօտեան ժամը 9—12-ը և երեկոյեան ժամը 5—7-ը։
Սօլօլակ, Բէհբութեան փող. № 23 (անկիւն Գանովսկայա)։ Հեռախօս 7—92.
(ա.օ.) առ. 699. 100—79

ԲԺԻՇԿ
Յ. Մելիք-Նուբարեան
ներքին և երեխաների հիւանդութիւններ, առանձնապէս թոքերի։
Թոքախտի բժշկութիւնը տուբերկուլիններով և պնևմատօրակսով։
Ընդունելութիւնը ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Ամեն օր (առաւօտեան 12—1 ժ.
(երեկոյեան 5—7 ժ.
Սօլօլակ, Ռտիշչևսկայա 10 (Լերմօնտովսկ. գեղատան դիմացը)։
(ե. հ. կ.) առ. 746. 100—37

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրօֆ. Mathieu-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզից
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11-ը։
(երեկ. ժ. 5—7-ը։
Միխայլովսկի պր. 86, տելեֆ. № 576.
(ե.հ.կ.) առ. 179. 100—73

ՄԻԵՒՆՈՅՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Թիւրքահայերի վիճակը, անշուշտ, չէր կարող քննութեան առարկայ լինել կռւող կողմերի հաշտութեան բանակցութիւնների ժամանակ. Եւ դա նրանց անմիջական գործն էլ չէր.

Կռւող կողմերը խօսել են միայն իրանց շահերի, փոխադարձ զիջումների, հնարաւոր համաձայնութեան կէտերի մասին։

Բայց պատերազմող կողմերի լիազօրների խորհրդակցութիւնից դուրս Լօնդօնում տեղի ունի մի ուրիշ խորհրդակցութիւն, որին մասնակցում են եւրոպական խոշոր պետութիւնների ներկայացուցիչները։ Այդ դեսպանախորհուրդը, անկասկած, կարող էր իր քննութեան ծրագրի մէջ մտցնել նաև հայկական հարցը և առհասարակ այն բոլոր հարցերը, որոնք շօշափված են Բեռլինի դաշնագրում և վերաբերում են Թիւրքիային։

Հայոց հարցի մտցնելը դեսպանախորհրդի պարապմունքների օրակարգի մէջ կը լինէր շատ բնական, որովհետև նա աւելի պակաս նշանակութիւն չէ ունեցել եւրոպական դիպլոմատիայի համար, քան մակեդոնականը, և մերձաւոր անցեալում սպառնական է եղել եւրոպական խաղաղութեան համար։ Եթէ մակեդոնական ճգնաժամը, շնորհիւ եւրոպական անհոգատարութեան, հասցրեց գործը պատերազմի, տրամաբանական է մակաբերել, որ հայկական հարցի զանցառութիւնը նոյնպէս կարող է անախորժ դէպքերի առաջ կանգնեցնել Թիւրքիային և պետութիւններին։

Եթէ Եւրոպան չուշացնէր իր միջամտութիւնը և ժամանակին ստիպէր Թիւրքիային իրագործել մակեդոնական բարենորոգութիւնները, այն ժամանակ պատերազմի կարիք չէր լինի և մարդկային արիւնը չէր հոսի Բալկանների ընդարձակ դաշտերում և լեռներում։

Նոյնը վերաբերում է Ասիական Թիւրքիային։ Այնտեղից նոյնպիսի յուսահատական ճիչ ու հեծեծանք է լըսվում, ինչպէս մակեդոնական բազմատանջ աշխարհից։

Թիւրքիան չէ կարողացել ինքը իր բարին գիտակցել և իր հպատակներին կապել իր հետ սիրով և համաքաղաքացիական ամուր համերաշխութեամբ։

Նա դարեր շարունակ հետևել է խարամանկահիւս քաղաքագիտութեան, որի հետևանքն այն է եղել, որ նա կորցրել է իր սեփական երկիրները։ Եւ նախկին խոշոր օսմանեան պետութեան սահմաններում այժմ ապրում են մի շարք պետութիւններ՝ Յունաստան, Չերնոգորիա, Սերբիա, Ռումինիա, Բուլգարիա, Եգիպտոս, նորաստեղծ Ալբանիան, այլևս չենք խօսում այն երկիրների մասին, որոնք անցան ուրիշ պետութիւնների ձեռք, ինչպէս են հարաւ-արևմտեան Անդրկովկասը, Տրիպօլիսը և այլն։

Թիւրքիան անկարող հանդիսացաւ քաղաքակրթական կեանքի սկզբունքներ մտցնել պետութեան մէջ, իսկ նրա դիպլոմատիան միշտ գոհացաւ աչքակապութիւններով և ժամանակաւոր աջողութիւններով։

Սակայն եւրոպական դիպլոմատիան էլ նոյնպէս անկար և այպանելի հանդիսացաւ Մերձաւոր Արևելքի խնդիրներում։ Նա երբեք այնպիսի ուժեղ և հեղինակաւոր կերպով չը գործեց Թիւրքիայի վերաբերութեամբ, որ սա կատարի իր վրա վերցրած պարտաւորութիւնները։ Եւրոպական դիպլոմատիան լաւ գիտէր, որ Թիւրքիան միայն ժամանակ էր վաստակում իր համար՝ խոստմնազանց լինելու. և ինքը կամաւ իրան խաբել էր տալիս, ուղղելով իր ուշադրութիւնը դէպի ուրիշ կողմ, այն է՝ դէպի սեփական արտօնութիւններ ձեռք բերելը Թիւրքիայի ֆինանսական և այլ ասպարէզներում։

Եթէ Թիւրքիան ինքնասպանութիւն էր անում, յետաձգելով բարենորոգութիւնների ներմուծումը, նա պաշտպանութիւն էր գտնում իր կործանարար քաղաքականութեան մէջ այս ու այն եւրոպական պետութեան կողմից, որը հանդէս էր գալիս իբրև բարեկամ և սրտակից, ինչպէս այդ տեսնում ենք— օսմանեան ներկայ իրականութեան մէջ գերմանական բարեացակամութիւնից, որը ոչ մի բարիք չը տուեց Թիւրքիային։

Եթէ դեսպանախորհուրդը այսօր անտես առնի հայկական հարցը և թողնի ցաւոտ խոց Թիւրքիայի մարմնի վրա, դրանով նա ոչ մի օգուտ տուած չի լինի ոչ ոքի, ոչ Թիւրքիային և ոչ եւրոպական խաղաղութեանը, այլ լարած կը լինի նոր հանգոյց ապագայ բարդութիւնների և յուզմունքների աւելի սուր արտայայտութիւնների համար։

Ա. Քալանթար

ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ

Հարիւր տարի սրանից առաջ ծնվեց մեր նորագոյն գրականութեան ասպարիզում գործող ամենախոշոր վերանորոգիչներից մէկը՝ Ստեփաննոս Նազարեանը։

«Հիւսիսափայլի» խմբագիրը սկիզբ դրեց գրական մի լուսաւոր շրջանի, որ համախմբեց առաջադէմ մտածողներին և գործողներին մի հասարակական դրօշակի տակ և կազմակերպեց մտաւորականների մի սերունդ, որը թէև ստուար չէր իր թւով, բայց լինելով ուժեղ բարոյական իր աւիւնով և հանդիսացաւ իբրև բեղմնաւոր խմոր յաջորդ սերունդների համար։

Հիւսիսափայլի շրջանը կը մնայ այն լուսաւոր գրական հասարակական շըրջաններից մէկը, որոնց վիճակված է ղեկավարող և ոգևորիչ հանդիսանալ ապագայ սերունդների համար։

Հասարակութիւնը պէտք է օգտվի յօբելեանից վերյիշելու իր խոշոր գործողին և նորից հաշիւ տալու իրան այն հոյակապ գործունէութեան մասին, որը եղաւ այնքան արդիւնաւէտ հայ գրականութեան և հայ հասարակական կեանքի համար։

Ա. Ք.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Կ. Պոլսում մինիստրների խորհուրդը շարունակում է քննել Հայաստանի բարենորոգումների նախագիծը ի նկատի ունենալով նաև հայերի պահանջները։

—

Նորագոյն տեղեկութիւնները յայտնում են քիւրդական նոր յարձակումների մասին Վանի շրջակայքում։

—

Կ. Պոլսի ազգային ժողովը Լօնդօնի վեհաժողովից պահանջում է երաշխաւորութիւններ Արևելեան Ռումելիայում բնակվող հայերի համար, նկատի առնելով նրանց իրաւազուրկ դրութիւնը։

Բեռլինից հեռագրում են հետևեալը «Рус. Вѣд.»-ին. «Փոքր Ասիայի նահանգներից յամառ լուրեր են գալիս հայերի ջարդի մասին։ Ֆրանսիական դեսպանութիւնը Պոլսում Պուանկարէի յանձնարարութեամբ այդ լուրերի առիթով դիմել է հայոց պատրիարքին։ Այդ քայլը ցոյց է տալիս ֆրանսիական միջամտութեան կարելիութեան մասին։

—

Թիւրքահայաստանից ֆրանսիական իշխանութիւնները զօրքեր են պահանջել իրանց կառավարութիւնից հայկական ջարդերին վերջ դնելու համար։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕՐՄԱՆԵԱՆԻ ԽՆԴԻՐԸ ԱԶԳ. ԺՈՂՈՎՈՒՄ

«Մշակի» № 284 ի Բանասիրականի բաժնում մենք արդէն զետեղել ենք Թիւրքահայոց ազգ. ժողովի դեկտ. 7-ին կայացած նիստի նկարագրութիւնը, որից մեր ընթերցողները տեղեկացան, թէ Կ. Պոլսի նախկին պատրիարք Մաղաքիա արքեպ. Օրմանեանի ամբաստանութեան ծանօթ գործը վերջապէս մտել է իր լուծման շաւղի մէջ։

Ինչպէս յայտնի է, ազգ. ժողովի դեկտ. 7-ի յիշեալ նիստում կարելի չէ եղել ստանալ այս ծանօթ խնդրի վերջնական վճիռը, և գործը յետաձգվել է ազգ. ժողովի յաջորդ նիստին, որը կայացել է այս ամսի 14-ին։

Ստորև առաջ ենք բերում այդ նիստի նկարագրութիւնը, քաղելով Կ. Պոլսի «Բիւզանդիոն» թերթից։

Ժողովը բացվել է Արշարունի պատրիարքի նախագահութեամբ և Հայկ Խօճասարեանի ատենապետութեամբ։

Այս նիստում՝ Օրմանեան սրբազանի գործի վերաբերմամբ առաջինը խօսք է առել Ոսկան Մարտիկեան և իր հաւանութիւնն է յայտնել քննիչ յանձնաժողովի եզրակացութեանը, ինչպէս և իրանից առաջ դեկտ. 7-ի նիստում Օրմանեանին ի նպաստ խօսողների տեսութիւններին։ Հռետորն ապա՝ շարունակելով իր խօսքը՝ ասել է. «Այս ժողովը եթէ Օրմանեանի ատենը գտնուելու ըլլար, տարբեր բան մը չպիտի ընէր իր ստուար մեծամասնութեամբը, հաւանելով Լա Հէյ ուղարկուած ծանօթ հեռագրին։ Երկու չափ երկու կշիռ պէտք չէ գործածենք։ Օրմանեանը կուզենք որ դատապարտենք, երբ իրեն գործակից գտնուող վարչութեան ատենապետը ընտրած ենք ազգ. ժողովի ատենապետ»։ Ճառախօսն ապա, անցնելով Տէրունեանի խնդրին, Օրմանեանի տակտիկան դատապարտելի է գտել. «Ըսին, թէ Օրմանեան սրբազան սիրտ չունէր. ընդհակառակն, ես կը կարծեմ, թէ անիկա ունէր չափազանց լայն սիրտ մը, իր մարտիրոսացած ժողովուրդին սուգը մոռնալու համար, և անոր խնամող և գուրգուրացող հայր մը չըլլալու համար։ Զենք կրնար ուրանալ, թէ իր շուրջը պահած է անձեր, որոնք սև էջերը կազմած են պատրիարքարանի պատմութեան։ Օրմանեան իբր վարդապետ մը որ կոչուած է՝ գացած է, իր գրական աշխատութիւնները իր փառքը կը կազմեն և զինքը կը բարձրացնեն։ Սակայն Օրմանեան սրբազան սնած ու մեծցած ըլլալով այնպիսի դաստիարակութեամբ մը, որուն վարը համակերպութիւն ու վերը տիրապետութիւն էր, իր պատրիարքութեան մէջ մղուած է անգիտակցաբար տիրապետելու։ Օրմանեան սրբազան կը պարծի, թէ իր օրովը ջարդ չեղաւ, այս բանը կը վերագրէ իր քաղաքագիտութեան, մինչ ինքը պատրիարք եղաւ, երբ արդէն ջարդերը վերջացած էին և ժողովուրդն արիւնաքամ եղած էր և այլ ևս նոր ջարդեր չէին կրնար ըլլալ... (Ձայներ՝ «Ապա ուրեմն Ադանայի 20,000 նոր զոհերն ուրկէ՞ առնուեցան»)։ «Մշակի» խմբագիր Համբարձում Առաքելեանի Օրմանեան սրբազան յայտնած էր, թէ ինքը լարախաղացի և գազանազուսպի դեր կատարած էր. սակայն աւելի ճիշդ է ըսել, թէ աւելի լարախաղացի, քան գազանազուսպի։ Վերջապէս հայ ժողովուրդին անիկա այլ ևս չի կրնար մտնել և անոր սիրտին մէջ տեղ մը գրաւել, սակայն պէտք է թողունք, որ անիկա գործէ գրականութեան մէջ։ Պէտք է թողուլ վարագոյր մը անցեալին վրայ»։

Հմ. Արամեան խօսել է երկարօրէն և պաշտպանել քննիչ յանձնաժողովի տեղեկագիրը, մանաւանդ դեկտ. 7-ի նիստում ճառող Արիստ. Գասպարեանի դիտողութիւնների դէմ։

Ապա խօսք է առել Սմբ. Բիւրատ և պաշտպանել այն տեսակէտը, թէ Օրմանեան մենակ չէ գործել, այլ ունեցել է գործակիցներ և ժողովներ, որոնք նոյնպէս պէտք է դատվեն. և եթէ հարկ է դատապարտել Օրմանեանին, ապա պիտի դատապարտել և այն վարչութիւնները, որոնք գործում էին Օրմանեանի օրով։ Ճառախօսը եզրակացնում է անպարտ ճանաչել նախկին պատրիարքին։

Հմ. Ք. Հէքիմեան խօսել քննադատել է քննիչ յանձնաժողովը և ի վերջոյ, իբր եզրակացութիւն, ասել է, թէ այն ամենը, որոնց պատճառով Օրմանեանի գործը ըսկսվեց, պէտք է ամփոփել «Թերութեանց պատասխանատուութեան մէջ»։ Ճառախօսը ասել է, թէ սրանից չորս տարի առաջ էլ ինքը շեշտում էր, որ Օրմանեան ունեցել է իր օգտակարութիւնն իբր պատրիարք, աշխատելով կրթական, որբախնամ, յարաբերական, ռուսահայերի եկեղեցական կալուածների գրաւման, պատրիարքարանի ներքին կանոնաւոր կազմակերպութեան, առաջնորդական թեմերի հովւութեան, Երուսաղէմի պատրիարքութեան խնդիրներում, ուստի անհրաժեշտ է արդարացնել նախկին պատրիարքին։

Ժակ Սայապալեան.— Քննիչ յանձնաժողովը իր դերը լաւ չէ կատարած։ Իր պաշտօնն էր պարզ տեղեկատուութիւն մը։ Պէտք էր ամբաստանողներուն փաստերուն դէմ Օրմանեան սրբազանի առարկութիւնները և հերքումները ներկայացնէր, առանց իր կողմէ եզրակացութիւն մը հանելու, մինչ, ընդհակառակն, կը տեսնենք թէ յանձնաժողովը վճիռներ կարձակէ։ Ասով ալ չէ բաւականացած. այն խնդիրները, որոնց համար Օրմանեան սրբազանի պատասխանները գոհացուցիչ չէ գտած, մէկ հարուածով մէկ կողմ նետած է իբր համարատուութեան նիւթ։ Այսպէս՝ Իզզէթ և Թահսին փաշաներու հետ իր յարաբերութիւնը, պատուանշան առնելու պարագան, և այլն։ Օրմանեան սրբազանի ատեն պատրիարքարանը ապահովագրական ընկերութեան մը պարզ միջնորդի դերին իջաւ։ Ամէն մէկ պաշտօնեայ, որ գաւառ կը մեկնէր, իր գրպանը պատրիարքէն կուսակալին ուղղուած յանձնարարական մը կունենար։ Ես չեմ մեղադրեր ընկերութիւնները, որոնք կը շահագործէին պատրիարքարանը, այլ պատրիարքը՝ որ կը նպաստէր այդ շահագործութեան։ Պաշտօնէ հրաժարիլը արդարացնելու համար Մասալ մը մէջ բերելով, Օհաննեան էֆ. ուզեց արդարացնել, սակայն տարակուսելի է։ Լա Հէյի հեռագիրը կը նմանի գնդակի մը, որ վրիպած է։ Սակայն վրիպած ըլլալուն համար արդեօք արձակողն յանցաւոր ըլլալէն կը դադրի։ Տէրունեանի մասին տրուած գիրը յանձնաժողովը չէ կըրցած արդարացնել և մեղադրելի կը համարի։ Ատենապետաց դիւանը աւելի առաջ կերթայ և այս պարագան ալ կարդարացնէ, անիկա նժար մը ձեռք կառնէ և ազգին արժանապատւութիւնը մէկ կողմը և քանի մը ոսկին միւս կողմը կը դնէ, սակայն ազգի մը արժանապատւութիւնը արդեօք քանի մը հազարներով կրնա՞ր փոխարինուիլ։ Եւ երբ այս ժուռնալին դէմ Տէրունեան էֆ. գրաւոր կերպով կը բողոքէ, հոս կը գտնուին անձեր, որոնք անոր ատենագրութեան մէջ չանցնիլը կը պահանջեն և երևակայել թէ ատենապետ ալ եղած է անոնցմէ մէկը։

Մանուկ Ազարեան.—Քանի որ խնդիրը դատական է և մենք հոս նստած ենք իբր վերին դատական մարմին, օրէնքի դէմ է ներկայանալ իբր դատախազ. վասն զի և ոչ մէկ երկրի օրէնքը թոյլ կուտայ, որ մարդ մը միևնոյն ատեն թէ իբր դատաւոր և թէ իբր դատախազ ներկայանայ։ Ճիշդ այս տրամաբանութեամբ էր որ պահանջեցի այս նամակը չեղեալ համարիլ, և կը կարծեմ թէ իմ այս պահանջս օրինաւոր էր։ Եթէ այս տարրական բաները չէք գիտեր, հարցուցէք և սորվեցէք։

Սայապալեան. (շարունակելով).— Անցեալ օր թերթ մը գրած էր, թէ Օրմանեան սրբազան Կաթողիկոսին կողմէ Եւրոպայի առաջնորդ պիտի անուանուի։ Այս լուրը սուտ էր, սակայն նպատակաւոր, կուզէր միտքերը շինել ի նպաստ Օրմանեանի։

Ձայն մը.—Հերքուեցաւ։

Սայապալեան.—Օր մը յետոյ սակայն... Օրմանեան սրբազանի պաշտպաններուն մեծագոյն փաստն է իր քաղաքագիտութիւնը, դիւանագիտութիւնը, վարչագիտութիւնը, եայլն։ Սակայն ազգը մաքիավէլներու պէտք չունի։ Ազգին բազմապահանջ վէրքերուն վրայ չմտածող, գաւառի հայութեան տառապանքներուն անկարեկիր այս պատրիարքին անպարտութեան համար ո՞ր երեսփոխանն է, որ պիտի համարձակի քուէ տալ։

Զ. Խորասանճեան.— Ե՛ս։

Սայապալեան.— Ազգը իր ստրկական քաղաքականութենէն ոչինչ շահեցաւ։ Հայ ժողովուրդն այդ քաղաքականութեան դէմ էր։ Այս ժողովը իր աւանդութիւններուն դէմ պիտի ելլայ, եթէ Օրմանեան սրբազանը արդարացնէ։ Օրմանեան սրբազանը կենդանի դիակ մըն է։ Շատ դիւրին է զայն արդարացնել, սակայն յիշեցէք, թէ առածը կըսէ, թէ վերջին խնդացողն է որ լաւ պիտի խնդայ, և ան պատմութիւնը պիտի ըլլայ։ Ես կը փափագէի, որ Օրմանեան սրբազանի անմեղութեան քուէ տուող երեսփոխաններն իրենց ճակատները չխարանէին պատմութեան դատապարտութեամբ։

Դոքտ. Թէրզեան դրուատել է Օրմանեանի՝ պատրիարք ընտրվելուց առաջ ունեցած գործունէութիւնը և չորս օրինական հիմքեր առաջ բերելով՝ գտել է, որ քննութիւն կատարելն անգամ ապօրինի գործ է, որովհետև պատրիարքներին տրվելիք միակ պատիժը կարող է պատրիարքական գահից զրկելը լինել։

Գասպ. Նէմցէ իր ճառով պահանջում է արդարացնել նախկին պատրիարքին։

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

—

Կ. Պոլիս, 15 դեկտ.

«Նոյէ-Ֆրէյէ-Պրէսէէն» անունով տեղական մամուլն ալ քանի մը օր առաջ հրատարակեց, թէ Ամենայն Հայոց Կաթողիկոսը պետութեանց դիմում ընելու համար կարգած է պատուիրակութիւն մը, որուն պետ կարգուած է Պօղոս-փաշա Նուպար։

Իսկ հայ թերթերը ծանուցին, որ Պօղոս-փաշան Նուպար, Պարիզի օսմանեան դեսպան Րիֆաթ-փաշայի ներկայանալով, հերքած է հայոց անջատողական միտումներուն մասին տեսնուած հրատարակութիւնները, յայտնելով թէ հայոց միակ փափագն է բարեկարգ վարչութեան մը տակ ապրիլ և ունենալ կեանքի, ինչքի և պատիւի ապահովութիւն։

⁂

Օսմանեան կառավարութիւնը ինչպէս երբեմն հայոց կողմէ Բեռլին դիմում կատարելու արտօնութիւն տալով ուզեց ռուսական առաջխաղացման դէմ արգելք հանդիսանալ, հիմա ալ հայոց՝ 61 րդ յօդուածով ձեռք բերած իրաւունքը ջնջելու և «հայկական խնդիրը» սպաննելու համար քիւրդական շարժում մը ստեղծելու փորձեր կընէ։ Հայաստանի բարենորոգմանց համար կազմուած ծրագրին մէջ քիւրդերու և հայերու հակառակութեան վերջ տալու համար որոշուած աշխատութիւնը, հակառակէն մեկնելով, կրնայ նշանակել այդ հակառակութիւնը իր ծայրայեղութեան հասցնել։ Ներքին գործերու մինիստրն ինչպէս անպաշտօն կերպով կը խորհրդակցի Օրմանեան սրբազանի, դօքտ. Տաղաւարեանի, Տիրան Քէլէկեան և այլոց հետ, և պաշտօնապէս պէտք բանակցի հայոց պատրիարքարանին հետ, նոյնպէս ալ կը բանակցի քիւրդ բազմաթիւ անձերու հետ։ Մասնաւորապէս դիտելի է, որ շէյխ Աբդուլ Կադէր՝ Վասպուրականի ամենէն ազդեցիկ քիւրդ ցեղապետը, որ ծերակոյտի ալ անդամ է, Բ. Դռան մէջ կանցնէ այս միջոցիս օրուան մեծ մասը, և միշտ ներքին գործոց մինիստրին հետ կը հաղորդակցի։

Միւս կողմէն՝ շարունակ լրաբերները կը հաւաստեն, թէ քիւրդերը կընդդիմանան հայոց բացառիկ ոևէ իրաւունք տրուելուն։ Հետեւաբար շատ կասկածելի է, որ կառավարութիւնը հայկական խնդիրը սպաննելու համար ձեռքի տակէ կը պատրաստէ քիւրդական խնդիր մը, երկու տարրերու ստեղծած անհաւասարակշռութեան վրայ հիմնելու համար իր երրորդի և տիրապետողի դերը։

⁂

Հայկական դատը փճացնելու համար դարձեալ լուրջ պայքար մը սկսած են թիւրքերը։ Այսօր Մարդինի նախկին երեսփոխան Սայիդ բէյ իթթիհադական «Իթթիխադը Եֆքեար» լրագրին մէջ կը պնդէ, թէ Դիարբէքիրի կուսակալութեան մեծագոյն մասին մէջ հայ գոյութիւն չունի։ Այս մտայնութիւնը դարձեալ գործել կը սկսի, և կը վախցուի, որ ասիկա հասնի մինչև գրգռութեան։

Շառայլ

ԿԻԼԻԿԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

—

Ջէբէլ-Բէրէքէթ, 25 նոյեմբեր

◆ Ազգային վիճակէն կարեւոր գրելիք մը չունիմ։ Ադանայի առաջնորդ Շահէ ծ. վարդապետը, որ տեղւոյն քաղաքական ժողովին ատենապետ Յակոբ էֆէնդի Օհանեանի և բողոքականաց քարոզիչ պատուելի Աչճեանի հետ Պոլիս գացած էր կառավարութեան հետ կարգ մը խնդրոց կարգադրութեան ի խնդիր, վերադարձաւ Ադանա, ուր իր ներկայութիւնը ներկայ շփոթ ժամանակաց մէջ անհրաժեշտ էր։

◆ Ազգ. կեդրոնական վարչութիւնը վերջապէս որոշած է զբաղիլ Կիլիկիոյ և Էջմիածինի կաթողիկոսութեանց յարաբերական խնդիրներով։ «Մշակը», որ այդ կենսական հարցով երկար զբաղեցաւ, յուսալի է, թէ պիտի չզլանայ յետ այսու ևս իր բարոյական աջակցութիւնը՝ համոզելու էջմիածնական շրջանակները իրաւասական անտեղի բծախնդրութեանց զոհ չբերել Կիլիկիոյ դժբաղդ հայութիւնը և ըստ կարի դիւրացնել բաղձալի համաձայնութիւնը՝ օրինաւոր և տեղական հիմերու վրայ։

◆ Լատին կրօնաւորները նորէն գործի վրայ են՝ շահագործելու մեր ազգին դժբաղդ կացութիւնը և մեր գիւղական կարգ մը բնակչութեանց դիւրահաւանութիւնը և բարոյական ինկածութիւնը։

Այժմ ալ Դէօթ-Եօլի շրջանակին մէջ սկսած են հաստատուիլ։ Էքբէզի մէջ բոյն դրած այդ պաթերաները այժմ ոգի ի բռին կաշխատին Խօջէլի, ուր քիչ միջոցի մէջ կրցած են մօտ վաթսուն տուն որսալ դրամական, քաղաքական պաշտպանութեան և այլ խոստումներով։ Առայժմ պատահական տուն մը կը գործածեն իբր եկեղեցի, բայց տարակոյս չկայ, որ քիչ օրէն դպրոցի և եկեղեցիի շինութեանց ևս պիտի ձեռնարկեն, վերջապէս տեղաւորուելու համար։

Դիտող

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
25 դեկտեմբերի

Լոնդոն. — Վեհաժողովի նիստում Թիւրքերը, նոր առաջարկութիւն անելուց յետոյ, հեռացան դահլիճից։ Դաշնակիցները վճռեցին, ի նկատի ունենալով Թիւրքերի անգոհացուցիչ պատասխանը, դադարեցնել վեհաժողովի զբաղմունքները։

Վերադարձած Թիւրքերը կամեցան բողոքել, սակայն նիստի նախագահ Նովակովիչը նկատի առնելով դաշնակիցների միաձայն բանաձևը՝ նիստը փակեց։ Ծագած վէճի ժամանակ դաշնակիցները բացատրեցին, որ զբաղմունքները ընդհատուեցին մինչև Թիւրքերի աւելի նպաստաւոր պատասխանը։ Թիւրքերը հեռացան չափազանց գրգռուած։

Դաշնակիցները յայտնում են, որ խզումն տեղի կունենար, եթէ չը լինէին մեծ պետութիւնների խորհուրդները, որոնց լսում են դաշնակիցները։

Ռէյտէրին հաղորդվեց թիւրք պատգամաւորների հետևեալ յայտարարութիւնը. «Բալկանեան պատգամաւորները մատնանշում են, թէ մենք հաշւի չենք առնում պատերազմի հետևանքները. իսկ մենք խնդրում ենք ընդգծել մեր տերիտորիալ զիջումների կարևորութիւնը. ի բաց առնելով երկու կէտը, մենք ընդունեցինք դաշնակիցների բոլոր առաջարկութիւնները։ Խնդրելով Ադրիանուպոլսի վիլայէթից դէպի արևմուտք ընկած երկիրը զիջելու մեր առաջարկութեան մէջ փոխել «գրաւած» խօսքը «գտնվող» խօսքով. դաշնակիցները ընդունեցին իրանց ցանկած երկիրը իրանց ձեռքում չը գտնվող։ Լրջօրէն կամենալով համաձայնութիւն, մենք բաւարարութիւն տուինք այդ խնդրին։ Այս ամեն զիջումների դիմաց դաշնակիցները ոչնչով չը պատասխանեցին։ Եթէ մենք հրաժարվում ենք Ադրիանուպոլիսը զիջելուց, այդ այն պատճառով միայն, որ այդ զիջումն անկարելի է Կ. Պոլսի և Դարդանէլի ապահովութեան տեսակէտից։ Մենք եկել ենք մտադրված՝ սահմանելու երկարատև հաշտութիւն այնպիսի պայմաններով, որոնք ապահովեն երկու երկիրների բարի յարաբերութիւնները ու առևտրական մերձեցումը։ Մենք այժմ պատրաստ ենք քննելու թիւրք-բուլղարական սահմանի հարցը, բայց Բուլղարիան պէտք է Ադրիանուպոլիսը թողնէ իբրև թիւրքական երկիր։ Մենք համաձայնում ենք հրաժարվել Կրետէի վրա ունեցած մեր իրաւունքներից, բայց պայմանով դաշնակիցները ուրիշ կղզի չը պահանջեն Եգէյեան ծովում։ Եթէ, չը նայած այս զիջումներին դաշնակիցները, հրաժարվելով ոտք դնել համաձայնութեան ճանապարհի վրա, ցանկանան խզել բանակցութիւնները, այն ժամանակ ամբողջ պատասխանատւութիւնը ընկնում է նրանց վրա։ Այդ դէպքում մենք չեղեալ ենք յայտարարում մեր արած բոլոր զիջումները»։

Դաշնակիցների յայտարարութիւնը. «Որովհետև օսմանեան լիազօրների առաջարկութիւնները չեն համապատասխանում դաշնակիցների պահանջներին, որոնք ձևակերպվեցին անցեալ նիստում, և ուշադրութեան առնելով, որ բանակցութիւնները նոր առաջարկված ուղղութեամբ չեն կարող յանգել համաձայնութեան, ուստի դաշնակիցների պատգամաւորները հարկադրված են դադարեցնել վեհաժողովի զբաղմունքները»։

ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԴԵՊՔԵՐԸ
(ԼՐԱԲԵՐԻ ՄԸ ՑՈՒՑԱՏԵՐԸ)

—

(Սեփ. թղթակցից)
Կ. Պոլիս, 11 դեկտեմբեր

◆ Այսօր բալկանեան դաշնակից պետութիւններուն հաշտութեան պայմանները հասան Բ. Դուռ։ Այս պայմանները շատ ծանր կերեւին Բ. Դրան, և լուր կայ, որ մինչև շաբաթ բանակցութիւնները պիտի խզուին։ Քեամիլ-փաշա՝ Նորատունկեան էֆէնդիի հետ երկար խորհրդակցութիւն մը ունեցաւ։ Նորատունկեան էֆէնդի եւրոպական պետութեանց քով գտնուող դեսպաններուն հետ հեռագիրներ փոխանակեց։ Թիւրքերը կը յուսան, որ բալկանեան պետութեանց պայմանները չափաւորելու յորդոր պիտի ըլլայ։

Լուր կայ, որ պետութիւնք պիտի չճնշեն պատերազմին շարունակութիւնը նաւային ցոյց ընելով, կամ հարկադրելով, որ պատերազմողները իրաւարարութեան սկզբունքը ընդունին։

13 դեկտեմբեր

◆ Աւստրիական դեսպան մարկիզ Պալլավիչինի և ռուսական դեսպան Գիրս՝ Նորատունկեան էֆէնդիի հետ տեսնուեցան։ Թէև չի գիտցուիր այս տեսակցութեանց նիւթը, սակայն կերեւայ թէ շատ ծանրակշիռ էին անոնց յայտարարութիւնները, զի Նորատունկեան էֆէնդի երբ Քեամիլ փաշային հաղորդեց անոնց արդիւնքը, վարչապետը անհրաժեշտ դատեց անմիջապէս մինիստրները խորհուրդի հրաւիրելու։ Նիստը տեւեց մինչև կէս գիշեր։ Կը լսուի, թէ այս նիստին մէջ քննուած է նաև Հայաստանի խնդիրը։ Պատերազմը շարունակելու հաւանականութիւնը կը չեզոքի, սակայն եւրոպական կառավարութեանց միջնորդութեան ալ խօսքեր կըլլան միասին։

Հայորդի

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ «MATIN» Ի ՖԷԼԻՏՕՆԻՍՏԸ

—

Պարիզի «Matin» լրագրի տաղանդաւոր ֆէլիէտօնիստ Կլէման Վօտէլ հետևեալ կերպով է նկարագրում խաղաղութեան կոնֆերէնցիան։

Տեսարանը տեղի ունի Սէն-Ջէմի պալատում։ Թիւրք և բալկանեան պատգամաւորները գումարված են... Նիստը բացված է. այդ պարոնները լիազօրութիւն ունեն խաղաղութեան շուտափոյթ կապման համար աշխատելու։

— Ներեցէք,—ասում է Թիւրքերից մէկը,—մենք չենք կամենում վիճաբանել յոյների հետ։

— Սակայն...

— Այստեղ «սակայն» չը կայ։ Բացի դրանից, մենք պէտք է հեռագրենք մեր կառավարութեանը։

Նիստը իսկոյն փակվում է։ Պատգամաւորները ուղարկում են իրանց մայրաքաղաքները ծածկագիր հեռագիրներ, նոյն տեղերից ստանում են ոչ պակաս ծածկագիր հեռագիրներ. դա շատ երկար պատմութիւն է և օրերն անցնում են... Վերջապէս կոնֆերէնցիան գումարվում է նորից. այդ պարոնները լիազօրութիւն ունեն աշխատելու, որ խաղաղութիւնը շուտ կապվի։

Սակայն Թիւրքերից մէկը վեր է կենում և ասում է.

— Բոլոր խօսակցութիւններից առաջ, մենք պահանջում ենք կենսական մթերքներ հասցնել Ադրիանուպոլիս։

— Անկարելի է, հազար ներողութիւն։

— Շատ լաւ, մենք կը հեռագրենք մեր կառավարութեանը։

Նիստը իսկոյն փակվում է... Ծածկագիր հեռագիրներ, պատասխաններ, պատասխանի պատասխաններ և այլն։ Անցնում են մի քանի օրեր։ Վերջապէս գործը կարգադրվում է և պատգամաւորները գումարվում են կանաչ սեղանի առջև, աշխատելու համար որ խաղաղութեան դաշն շուտափոյթ կապվի։

Բայց Թիւրքերից մէկը վեր է կենում և ասում է.

— Սկսելուց առաջ մենք պահանջում ենք առ ոչինչ համարել և տեղի չունեցած այն յաղթութիւնները, որ իբր թէ դուք տարել էք. բացի դրանից, դուք բարի կը լինէք իսլամութիւնն ընդունել և այսուհետև ֆէս ծածկել։

— Մի՛ պնդէք...

— Ինչպէս ուզում էք. մենք կը հեռագրենք մեր կառավարութեանը։

Սա կարող է տևել տաս տարի, քսան տարի, սա կարող է շարունակվել յաւիտեան, որպէս ասում է երգը...

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, 13 դեկտեմբերի

Օսմանեան զօրամասերը Սօուջ-Բուլաղի, Լահիջանի և այլ սահմանային վայրերի շըրջանները մաքրելուց յետոյ՝ առաջինը բելգիացիների վարչութիւնը—որի իրաւասութեանն է յանձնվել Պարսկաստանի մաքսերի և ֆինանսների տնօրինութիւնը—փութաց վարչութեան պաշտօնեաներից բելգիացի Դիւմէին՝ օգնական 4 պարսիկ պաշտօնեաներով և 2 պարսիկ կօզակների ընկերակցութեամբ՝ ուղարկել Լահիջան և Սօուջ-Բուլաղի շրջանը՝ մաքսատներ հաստատելու և առհասարակ յիշեալ վայրերում ֆինանսական գործը կանոնաւորելու մտքով։

Սօուջ-Բուլաղում տեղի դատաւորը՝ Սարդար-Մուքրին՝ 50 ձիաւոր յանձնեց Դիւմէին ապահովութեան համար։ Թէև վերջիններս քիւրդ ձիաւորներից չէին, որոնք լաւ ծանօթ են այդ տեղերի աշխարհագրութեան, այլ սարդարի ձիաւորներ, որոնք անպէտք և միանգամայն անծանօթ էին երկրին։ Որոշ չափով մեղաւոր են համարում դատաւորին այս մասին։

Դեռ մինչև հիմա յայտնի չեղաւ, թէ ինչու և ինչպիսի հանգամանքներում է տեղի ունեցել կռիւ տեղացի քիւրդերի հետ. միայն հեռագրով յայտնվեց այն, որ Լահիջանում Շիվանկան գիւղի մօտ քիւրդերի զինված հօրդաները վրա են տուել և սպանել թէ Դիւմէին և թէ նրա 4 ընկերներին։ Վերջիններիս կողմից եղած դիմադրութիւնը հասկանալի է այն պատճառով, որ յարձակվող քիւրդերի կողմից ևս կայ մի հոգի սպանված։ Կարճ ընդդիմութիւնից յետոյ 50 ձիաւորները վատաբար փախուստ են տուել՝ թողնելով Դիւմէին չորս ընկերներով բարբարոս քիւրդերի ձեռքում։

Անակնկալ լուրը մեծ վրդովում առաջացրեց եւրոպացիների և կառավարական շրջաններում, և անմիջապէս կարգադրվեց սպանվածների մարմինները գտնել տալ՝ Սօուջ-Բուլաղի ռուսաց հիւպատոսի պահանջումով և աջակցութեամբ։ Կռւի և սպանութեանց դէպքը կատարվել է դեկտ. 5-ին, և դեկտ. 10-ին Դիւմէի գանգաջախջախ և ծակոտված մարմինը մեծ պատւով բերին Թաւրիզ։

Խժդժաբար սպանված բելգիացի երիտասարդ Դիւմէն պատկանելով կաթօլիկ դաւանութեան, ըստ տպագրված մահազդի, ուղարկված՝ մաքսատանց և ֆինանսների պաշտօնեայ բելգիացի միսսիայի անդամների կողմից, յաջորդ օրը, դեկտ. 11-ին, Թաւրիզաբնակ Լազարիստներ նորակա-

---

Յարութիւն Շահրիկեան.— Այս ժողովին գոնէ մեծամասնութիւնը գիտէ, թէ ես հակառակորդ չեմ ներկայացած, նոյնիսկ ասկէ չորս տարի առաջ երբ Օրմանեանը ամբաստանել մօդա էր դարձեր։ Ես միայն կըսէի, թէ ասիկա քաւութեան նոխազ մի՛ դարձնէք։ Ասիկա անձնական քմահաճ կարծիք մը չէր, այլ հետեւանքը խոր ուսումնասիրութեան։ Այս ժողովին 1908 ի այն նիստին մէջ, ուր յանձնաժողովի ընտրութիւն պիտի կատարուէր, ես կանխատեսութիւնը ունեցայ այս օրերուն և առաջարկեցի այն ժամանակ, որ քննուէր raison d'être-ն այս քննութեան և ճշդուէր, թէ ինչու կը կատարուէր այս քննութիւնը։ Մէկը պատրիարք է եղեր և ապա ինկեր էր։ Վարչութիւն մը եկեր և գացեր էր, և անոր յաջորդներ էին ուրիշներ, սակայն ոչ հրաժարական կար մէջտեղ և ոչ ալ կատարուած գործողութեան պատճառաբանութիւններ։ Այն ատեն ես իմ հայեացքս պարզեցի և պահանջեցի, որ բնորոշուին այն գործողութիւնները և օրինականանան։ Նոյն օրը հազիւ արձանագրուեցաւ իմ այս պահանջս, սակայն արբեցնող դրամասիրութիւնը շուտ հասաւ, և այն ատենէն իսկ տեսայ, թէ տրամադրութիւնները որքան փոխուած էին։ Ես քանիցս պահանջեցի, որ պատասխանատուութիւնները ճշդուէին և վարչութիւնն ալ միասին քննութեան տակ առնուէր։ Այն ատեն պ. Արամեան միջին ճամբայ մը գտաւ և ըսաւ, թէ յանձնաժողովը վարչութեան պատասխանատուութիւնն ալ տեսած ատեն՝ պիտի տեղեկագրէ. սակայն տեղեկագրին մէջ այս մասին ոչինչ կըսեն։ Կը խոստովանիմ, թէ իմ ալ համոզումս շատ փոխուած է այն օրէն այսօր։ Ես չափազանց ուրախ եմ, որ երկու տեղեկաբերներն ալ գէթ իբր երեսփոխան արտայայտուեցան, և անշուշտ իբր երեսփոխան ինչ որ ըսին, իբր տեղեկաբեր չպիտի հերքեն։ Սակայն առանց այդ երկու տեղեկագիրներուն մանրամասնութեանց մտնելու, կը յայտարարեմ, թէ անոնք զէրօ էին և ոևէ տպաւորութիւն չեն ձգեր իմ վրաս։ Օրմանեանի դէմ եղած ամբաստանութեանց մտնելէ առաջ գիտել կուտամ, թէ մեր բարքերու բերումով անձնաւորութիւնները աւելի մեծ նշանակութիւն կը ստանան, քան թէ ազգին ամենէն կենսական շահերը, որոնք այնքան շահագրգռութիւն առաջ չեն բերեր, որքան անձի խնդիրները։ Արդեօք այս վայրկեանը, այս վճռական, պատմական վայրկեանը, ուր ամենէն աւելի մեր ջիղերը հանդարտ պէտք էին ըլլալ և մեր ձեռքերը իրարու միացած, վայրկեանն էր այս քննութեան, որ կիրքերը յուզելու կը միտի։ Ատենապետը՝ երբ անցեալ նիստին վայրկեանները պատմական կը հռչակէր, կը սպասէի, որ յայտարարէր, թէ այս քննութեան ժամանակը չէր։ Ազգերու կազմութեան մէջ կան վայրկեաններ, ուր պէտք է դադրին ամեն ինքնուրոյնութիւններ, անջատումներ, երկպառակութիւններ, գերագոյն շահուն առջև ուրոյնութիւնը պէտք չէ տեղ ունենայ։ Կը փափաքէի այդ բարձրութեան հասած տեսնել ազգը և այս տեսակ վայրկեաններու չբերել սեղանի վրայ խնդիր մը, որ կիրքերը կարծարծէ։ Այս գերագոյն վայրկեանին իմ և ընկերներուս փափաքն էր առաջ չբերել։ Ցաւալի է, որ խնդիրը ձգձգուեր է այսքան երկար ատեն։ Մենք բնաւ համամիտ չենք եղած այս ձգձգումներուն, ընդհակառակն միշտ կուսակից եղած ենք արագ գործունէութեան։ Սակայն հիմա գերագոյն սրբութեան առջև կը փափաքինք, որ այս խնդիրը յետաձգուի, սակայն եթէ պիտի շարունակուի, մեր գնահատութիւնը կընենք յանձնաժողովին տեղեկագրին վրայ։ Ժողովը պատմութիւնը կը յեղաշրջէ, և ինչպէս շատեր արտայայտուեցան, կուզուի օրէնքի տրամադրութեանց վրայ հիմնուած ջնջել ամբաստանութեան իրաւունքը և կամ նենթադրել զինքը գաղտ վրայ, իր յաջորդներուն գործութիւնը ապօրէն համարելով։ Օրմանեան տապալած է այնպիսի ատեն մը, երբ ազգ. ժողով գոյութիւն չունէր և ժողովուրդը անոր դէմն էր, որ կը կատարէր, վար նետելով Օրմանեանը։ Այս պոռթկումը կատարուած էր այնպիսի ժամանակի մը մէջ, երբ օրէնքները գոյութենէ կը դադրին։ Ցոյցերը տգեղ էին, սակայն 12 տարուան դէպքերն ալ տգեղ էին։ Այս ժողովը կատարուած այս գործը կիրարկելէ ամբաստանութիւնները քննութեան յանձնելով։ Հանրային կեանքի մէջ երկու տեսակ պատիժ կայ գործիչներու, վարչական և խորհրդարանական։ Ժողովրդական պատիժը ժողովը իւրացնելով, վարչական պատիժն ընդունած եղաւ և Օրմանեան յաւիտեան դատապարտուած է, քանի որ այս ժողովը անոր յաջորդին ընտրութիւնը կատարած է, որով խորհրդարանական պատիժն ալ տուած է։ Այս տեսակ բացառիկ պարագաներու մէջ, յեղափոխական պահերու մէջ այս տեսակ պոռթկումներ տեղի կունենան. պէտք է օրէնքը բացառապէս պարագաներուն պատշաճեցնել և ոչ թէ իրերը դատել սովորական ժամանակներու պէս։ Քննելով տեղեկագիրը, կը տեսնենք, որ անիկա կըսէ, թէ ամեն մէկ խնդրի համար օրը օրին ընթացք է տուած, մինչ, ինչպէս կը հաստատուի դիւանապետներուն խօսքերով և արձանագրութիւններով, այսպէս չէ եղած։ Ձեր խղճին դիմում կընեմ, եթէ կարողութիւնները պիտի գնահատուին—որոնք անվիճելի են—պէտք է գնահատուին օգուտին համեմատ։ Օհանեան էֆ. կը թելադրէր երեւակայել այն օրերը, ուր ամեն քայլափոխի մարդ լրտեսներէ շրջապատուած էր։ Ես շատ քիչ բաղդ ունեցած եմ ապրելու այդ շրջանին, սակայն կը փափագէի։ Աշխարհական տարրը աւելի վտանգի տակ էր, ինքն աւելի միջոց ունէր, ինչու անոնցմէ շրջապատուեցաւ։ Եւ ասոր համար կախաղանի արժանի է։ Աշխարհական տարրը աւելի յանդուգն էր և աւելի համարձակ։ «Սահմանադրութիւնը պաշտպանեց» կըսեն, սակայն սխալ է։ Համիդն էր, որ պաշտպանեց սահմանադրութիւնը. (ձայներ՝ «օ, օ»)։ Եթէ Համիդ ուզէր, մէկ հրամանով տակն ու վրայ կընէր սահմանադրութիւնը, սակայն անիկա նոյն իսկ Բարդուղիմէոսի տեղապահութեան օրերուն չըրաւ, քանի որ հայու մը կողմէ ասանկ առաջարկ մը չէր եղած։ 1897-ին ոստիկանութեան մինիստրը կը դիմէ և կը հարցնէ, թէ բանտարկեալ հայերուն պատրիարքարան երաշխաւոր կըլլա՞յ, զանոնք արձակելու համար։ Օրմանեան չի տար այդ երաշխաւորութիւնը։ 1905 հոկտ. 5-ին ս. Առաքելոց վանքին մէջ պատսպարուած յեղափոխականները յանձնելու հրաման կուտայ։ Պատրիարքարանը կը խուզարկէ և տեղեկագիրներ կուտայ։ Տարագրելոց հաշիւներու քննութիւնը ըստ օրինի տնտես. խորհուրդին չի յանձնուիր։ «Սահմանադրական կարգերը պահած է» կըսեն։ Ռօդոստոյի Վանրիճ վարդ., երբ գաւառական ժողովէն պաշտօնանկ եղաւ, ժողովը լուծեց և Օրմանեան եպ. այս ապօրէն արարքը պաշտպանեց և բանի պաշտօնի վրայ պահեց զինքը։ Սակայն եթէ չըլլային այս բոլոր ամբաստանութիւնները, զինքը դատապարտելու համար բաւական էին Արծրունիի կեղծ անունին տակ ծածկուած անձնաւորութեան մը սա գրածները (ցոյց տալով գիրքը), եթէ բոլոր միւս ամբաստանութիւնները գոյութիւն չունենային և ճիշդ ըլլային գոնէ 1/10-ը այն բոլոր ըսուածներուն, որոնք ուրիշ եկեղեցւոյ իշխանի մը կողմէն իրեն կը վերագրէին սա հատորին մէջ (ցոյց է տալիս Մուշեղ վարդապետի «Փտութեան օջախը»), անիկա բաւական էր զինքը դատապարտելու համար։ Եթէ տակաւին ասոնք ամենքն ալ չըլլային և միայն Տէրունեանի խնդրոյն համար գրած թուղթին մէջ «Ժրնէվ է և չեմ գիտեր թէ ի՛նչ կընէ» բառերը գրած ըլլալը կը բաւէր։ Այս տեսակ մատնութեան մը համար սովորական անհատ մը շան-սատակ կընեն։ Սակայն գտնուեցան երեսփոխաններ, որ այս մատնութիւնն ալ պաշտպանեցին։ Զինքը Բաբանին նմանցուցին, նախկին յեղափոխական յայտարարելով—ինչ որ չեմ հաւատար—սակայն եթէ իրաւ ըլլար իսկ, յեղափոխականը մինչև որ չսեւնար, չկեղտոտէր, հոն չէր կրնար հասնիլ։

Թէքէեան.— Կերեւի թէ Բաբանի չափ կեղտոտելով...։

Շահրիկեան (շարունակելով).—Յանձնաժողովը կարգ մը խնդիրներու համար «համաբաշխութեան կը պատկանին» ըսած էր, սակայն ինչու։ Անիկա չէր ըսած։ Ես ալ զանոնք մէկ կողմ կը թողում։ Ամեն մարդ, իր կոչումին համաձայն, պարագաներու մէջ երեւան կելլէ։ Մենք ունեցանք Վարժապետեան մը, որ կոչումի մը ծառայեց, Խրիմեան մը՝ որ դպրոցի մը հիմնադիրն եղաւ և Իզմիրլեան մը՝ որ գնաց գաղափարի դրօշի մը կառչիլ և հոն հաստատուն մնալ։ Կը վերջացնեմ խօսքս, ըսելով թէ «Արդեօք այս գերագոյն րոպէին յարմար էր այս տեսակ քննութեան։ Արդեօ՞ք»։

Դր. Զօհրապ.—Ես անցեալ ուրբաթ օրուան և այս ուրբաթ օրուան տեսարաններուն պէտք չունէի, տեսնելու համար թէ մարդ որքան տկար և աղքատ արարած մըն է, երբ ուրիշները դատելու կելլէ։ Պիտի փափագէի, որ մարդիկ երբ դատելու կը ձեռնարկեն իրենցմէ մէկը, կարող ըլլային մոռնալ ամեն ցաւ, կսկիծ և բարձրանալ մարդկութենէն։ Պատմութիւնը եթէ ապագային քննէ այս դատական գործը, պիտի գտնէ շատ ոխերիմ հակառակորդներ և շատ ջերմ պաշտպաններ, և ոչ սակայն անկողմնակալ դատաւորներ։ Սակայն իրաւունքը շատ յարգելի բան մըն է, և անիկա ամենէն ալ պէտք է յարգուի։ Մեր ըրածը կսկիծներու վերլուծում մըն էր, քանի որ տասներկու տարիներու տառապանքի կեանք մը կը քննենք, հետեւաբար կը հասկնամ, թէ այսքան տրամութիւն առաջ կը բերեն անոնք։ Ես արդէն իմ փորձառութեամբս բացարձակ արդարութեան վրայ առյց եկեղեցում բազմամարդ երկսեռ հանդիսականների ներկայութեամբ կատարվեց պատարագ, հոգեհանգստեան արարողութիւն և թաղումը կաթոլիկների հանգստարանում նմանը չը տեսնված շքով։

Եկեղեցում ներկայ էին՝ բացի Ատրպատականի ընդհանուր գեներալ նահանգապետ Սիփեհդարը-Ազամից՝ բոլոր պարսից մեծ պաշտօնէութիւնը, սկսած Շուջա-ուդ-Դովլէից, քարգուզարից, զինուորական պաշտօնեաներից և այլն. կային ամբողջ հիւպատոսական մարմինը, հայոց առաջնորդական փոխանորդն երկու քահանաներով, եւրոպական և ռուս կոլոնիաների ներկայացուցիչները և բազմաթիւ հայեր։ Ընկուզենուց պատրաստված փակ դագաղն ուսերի վրա տանում էին եւրոպական ձևի սգազգեստ դագաղակիրներ։ Ուղարկաւորութեանը մասնակցում էին պարսից զինուորական երկու նուագախումբ և մի ռուսական, որոնք նուագում էին փոխ առ փոխ տխուր մահերգեր մինչև հանգստարանը՝ ընկերակցութեամբ ձիաւոր զինուորների, բազմաթիւ կառքերի և հոծ հասարակութեան։ Կային և եդէկ ձիեր ի պատիւ։

Գերեզմանի վրա խօսեցին դամբանականներ՝ Ֆրանսիական հիւպատոսը, մաքսատանց և ֆինանսների տնօրէն Լանգէն և քարգուզարը։ Առաջին երկուսը ցաւակցութիւն յայտնեցին տխուր ու դժնդակ փաստի մասին այն երկրում, ուր բարգաւաճման համար են տքնում իրանց հայրենիքից բաժանված բելգիացիները։ Քարգուզարը ցաւակցութեան հետ ի դիմաց կառավարութեան ներում էր խնդրում անախորժ դէպքի համար։

Մաքսատան հայ պաշտօնեաները ընդհանրապէս և անուղղակի տրոց տնօրէն Ստեփանխան Եղիազարեան մասնաւորապէս գնահատելի զարկ տուին սգահանդէսի կանոնաւորութեանն և շքեղութեանը։

Իր տեղում քննութիւն կատարելու դիտաւորութեամբ քարգուզարի օգնական Նասրը Վուզարէն ուղարկվել է արդէն, որի հետևանքից դեռ ոչինչ յայտնի չէ։

Անտարակոյս՝ մեծ տուգանք է պահանջվելու. թէ ի՞նչ քանակութեամբ և ումից, յայտնի չէ. իր ժամանակին կը գրեմ «Մշակին»։

Հայկազուն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՐԵՐՆ ԷԼ ԵՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒՄ ՆՐԱ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆԸ

—

Մի՞թէ կարծում էք, ընթերցող, թէ Գրիգոր Արծրունին մեռել է։ Որքա՜ն սխալ ու անհեթեթ կը լինէր ձեր այդ կարծիքը, եթէ իրական համոզմունքի արդիւնք լինէր այն։ Ցամենայն դէպս՝ ես այդպէս չեմ համոզված և այսօր դրականապէս շեշտում եմ, որ Գրիգոր Արծրունին կենդանի է և ամեն ժամ ու րոպէ ղեկավարում է նա մեր մտքերը։

Մենք ամեն օր կրկնում ենք այդ մեծ մարդու գործերը, ամեն օր կրկնում նրա կենսատու խօսքը, ամեն օր ցանում նրա կենսունակ սերմերը։

Ամեն օր թարմ է նա մեր յիշողութեան մէջ, ամեն օր սնվում ու յագենում ենք նրա յստակ գաղափարներով։ Եւ եթէ այսօր հայ մտաւոր անդաստանը հրդեհված ենք տեսնում փրկարար լուսոյ ճառագայթներով, եթէ այսօր տեղ-տեղ լուսոյ օազիսներ են երևում, այդ անպայման շնորհիւ Արծրունու, շնորհիւ նրա շիտակ անձնուրացութեան, շնորհիւ նրա լուսամիտ գրչի հզօր արտայայտութեան։

Ճիշդ է, մենք նրա ադամանդանման փայլուն, կենդանի ճակատը չենք տեսնում, նրա կենդանի շրթունքները մեզ հետ մտքի փոխանակութիւն չեն ունենում, սակայն նրա կենդանի զօրեղ խօսքը ամեն օր հընչում է մեր ականջին։ Միայն անագորոյն դեկտեմբերի 19-ն է, որ ամեն տարի մեր մէջ տխուր վերյուշեր, տխուր մտածմունքներ է առաջ բերում և մեր ցաւերը նորոգում նրա մարմնի մեռածութեան մասին։

Ես յիշում եմ մեր այդ վերանորոգչի մահվան գուժի մոմենտը։ Այդ ժամանակ գաւառական մի գիւղում, Մեծ-Ղարաքիլիսայում, մի խեղճ վարժապետ էի։ Այս գիւղը 20 տարի առաջ արծրունեան դրօշն էր կրում ու իր գիւղ տեղով տալիս է նրա «Մշակին» մօտ 20 բաժանորդ։ Եւ այսօր այդ գիւղը նրա թերթի և նրա մտրակների ազդեցութեան շնորհիւ մի մտաւոր կենտրոն է համարվում Փամբակի շրջանում։

Արծրունին այդ գիւղի կուռքն էր դարձել և նրա ամեն մի խօսքը մի ճշմարիտ պատգամ։ Այդ խօսքը սխալ լինէր թէ ուղիղ՝ այդ միենոյն էր. նա անպայման հալած իւղի տեղ էր ընդունում, որովհետև այդ գիւղը միանգամայն համոզված էր, որ Արծրունու սխալ խօսքն էլ համոզվածութեան արդիւնք է՝ արտայայտված շիտակ դաւանանքի տէր ու տիրական հրապարակախօսի բերանով։

Այո, այս էր պատճառը, որ Արծրունին մի կուռք էր դարձել այդ գիւղի և նրա գիտակիցների համար. ապա ուրեմն ինչ կը լինէր նրան երկրպագողների դրութիւնը, երբ նրա մահվան բօթը գուժվեց։

Դպրոցում պարապում էինք։ «Մշակի» գործակալներից մէկը—Արծրունու մոլեռանդօրէն պաշտող Արսէն աւ. քահ. Տէր-Սիմէօնեանը՝ այժմ հանգուցեալ—որ դըպրոցի էլ կրօնուսոյցն էր, վերին աստիճանի յուզված դէմքով եկաւ դպրոց և խռոված շեշտով առաջարկեց դասերը դադարեցնել մեծ մարդու յիշատակին և շտապել եկեղեցի հոգեհանգիստ կատարելու։

Քարացած մնացինք. թէ ինչ էր պատահել՝ դեռ չը գիտէինք։ Վերջապէս նա ամենամեծ դժուարութեամբ գուժեց մեզ մեծ մարդու անսպասելի մահը։ Մենք սառուց կտրեցինք ու որևէ կերպ արտայայտվել չը կարողացանք. լուռ հեկեկում էինք միայն։ Այդ տպաւորութիւնը տակաւին ինձ համար թարմ է, և ես մինչև օրս էլ դեռ չեմ մոռանում այդ մոմենտը։

Այստեղ պէտք է ասել, որ հանգուցեալ յիշեալ Արսէն աւագ քահանան շատ ժլատ էր արտասվելու կողմից. այդ մարդու աչքում ես արցունք չէի նկատած. սակայն այդ օրը Արծրունու մահվան գուժը հաղորդելու ժամանակ հանգուցեալը իրան պահել չէր կարողանում, և հեկեկանքը թոյլ չէր տալիս նրան անհրաժեշտ կարգադրութիւնները անելու։

Մեր երկար հեկեկանքից և երկար պաուզայից յետոյ սկսեցինք արդէն արտայայտվել «Մշակի» ապագայ դրութեան մասին. և մեր մէջ անդադար կրկնվում էր այն միտքը, թէ ինչ կը լինի թերթի վիճակը, ով կը լինի նրա խմբագիրը և ով այնպէս համարձակօրէն կը ղեկավարէ նրան։

Այո, 20 երկար տարիներ են անցել նրա մահվան օրից՝ և դեռ շատ 20 տարիներ կանցնեն, և սակայն նրա յիշատակը չի մոռացվի, չի մեռնի։ Արծրունիները եզակի երևոյթներ են. Արծրունիները շատ ուշ-ուշ են ծնվում, և նրանք մեռնում են անմահանալու համար. և եթէ այդպէս չը լինէր, մենք նրան այսօր մեր պաշտամունքի առարկան չէինք դարձնի։

Գուցէ շատերը յաւակնեն, գուցէ շատերը մեծամտանան իրանց մի-մի Արծրունի ներկայացնել, սակայն այդ աբսուրդ կը լինի և նոյնիսկ ծիծաղելի՝ այդպէս մտածողների համար։

Արծրունին հայ թմրած մտքի համար մի ամենախոշոր խթան էր, որը իր հուժկու գրչով, անկեղծ, մաքուր և համոզված խօսքով հեռացրեց մեր մտքի խաւարը, վերցրեց մեր աչքերից վարագոյրը։

Եւ եթէ Արծրունիներ չեն ծնվում, եթէ Արծրունիներ չը պիտի ծնվեն, գոնէ աշխատենք նրա ցանած գաղափարներն ու սերմերը խորը կերպով արմատաւորել մեր սրտերում, մեր վշտոտ ու աննախանձելի իրականութեան մէջ։

Խոնարհվում ենք նրա մեծութեան առաջ, երկրպագում ենք նրա անմահ յիշատակը։

Միք. սարկ.

Ա. ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ ԲԱԳՈՒԻ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ

(Ներկայացում յօգուտ «Մշակի» ֆօնդի՝ նրա 40-ամեակի առիթով.—Գրիգոր Արծրունու մահվան 20-ամեակը, հանգուցեալի յիշատակը.—Ա. Սարուխանի դասախօսութիւնը Արծրունու մասին)

—

Բագու, 23 դեկտեմբերի

Ամսիս 19-ին, երեկոյեան ժամը 7-ից Բագուի հասարակական ժողովարանի դահլիճը առանձին տօնական շուք էր ստացել։ Ամեն ոք—միլիօնատէր թէ արհեստաւոր, բարձրագոյն կրթութեան տէր թէ բանուոր—շտապում էր դէպի ժողովարան, մանաւանդ քնքուշ սեռը, որը միշտ իրան հեռու է պահել հայկական ներկայացումներից, բայց այդ օր նրանց մի անտեսանելի ոյժ քաշում էր դէպի հայ բեմը, հայ գեղարուեստի տաճարը։ Այդ ոյժը «Մշակի» ցոյց տուած պաշտպանութիւնն է, որին աջողվեց հայ կանանց բռնաբարված իրաւունքները ազատել։

Ուղիղ ժամը 9-ին բեմ բարձրացաւ Ա. Սարուխանը և սկսեց շատ հասկանալի, պարզ և սահուն ոճով խօսել հանգուցեալ Գր. Արծրունու գործունէութեան ու 20-ամեայ մահվան տարեդարձի առիթով։

Դասախօսութիւնը տևեց բաւական երկար, որը սակայն այնքան հետաքրքրական էր, որ հասարակութիւնը էլեկտրականացած լսում էր լուռ, ծարաւի ախորժակով։

Ի նկատի առնելով, որ գաւառական խուլ անկիւններում այդպիսի դասախօսներ կատարել սով է, բայց «Մշակը» մուտք ունի այդ վայրերում, մենք առաջ ենք բերում դասախօսութեան համառօտ բովանդակութիւնը։

«Այսօր լրացաւ ճիշդ 20 տարի այն օրից,—այսպէս սկսեց դասախօսը,—երբ յաւիտենականութեան գիրկը յանձնեցինք մեր մեծ հրապարակախօս Գր. Արծրունուն։ Եւ այս երեկոյթի առիթով, որ կազմակերպված է նրա տարեկցի և իր սիրած ու փայփայած լրագրի գոյութեան 40-ամեակի առիթով, անհրաժեշտ է, որ մեր յիշողութեան մէջ զարթեցնենք նրա բազմաշխատ գործունէութիւնն, որ այնքան զգալի արդիւնք է ունեցել մեր հասարակութեան համար։

«Նա ծնվել է 1845 թւականին Մոսկվայում. Նրա պապը գաղթել է Վասպուրականից, ուր նրա նախնիքը իշխանական դիրք ունէին պատմական ժամանակներում»։

Ըստ դասախօսի՝ փոքրիկ Գրիգորը մինչև 10 տարեկան հասակը հայերէն ոչ մի խօսք չէ իմացել, այլ հեռու մայրենի հողից, շրջապատված լինելով օտար դաստիարակչուհիներով՝ խօսել գիտէր միայն ռուսերէն և ֆրանսերէն. ծնողները՝ 10 տարեկան լինելուց յետոյ Արծրունուն ուղարկում են Գերմանիա, ուր երկու տարի մնալուց յետոյ վերադառնում է Թիֆլիս, ուր և հաստատվելով առաջին անգամ հայերէնի դաս է առնում։ Մայրենի լեզուի համն առնելով, ծանօթանալով, նախ աւարտում է Թիֆլիսի գիմնազիան, ապա մտնում է Մոսկվայի ու Պետերբուրգի համալսարանների բնագիտական ֆակուլտէտը, սակայն հիւանդութեան պատճառով թողնում է Ռուսաստանը և անցնում շվէյցարական և գերմանական համալսարանները, ուր աւարտում է փիլիսոփայութեան դոկտորի աստիճանով։

«...Ուսանող ժամանակից նա հաստատ կերպով որոշել է գործել բացառապէս իր ազգի համար—շարունակում է դասախօսը,—և որովհետև հայերէնի բաւականաչափ հմտութիւն չունէր, ուստի դիմում է հայագիտութեան բոյնը՝ Մխիթարեան Միաբանութեան, նախ Վիէննայի, ապա Վենետիկի վանքերը, ուր պարապում է հայերէնով։

Ապա դասախօսը մանրամասնաբար պատմեց թէ ինչ դրութիւն էր տիրում Կովկասի հայութեան մէջ այն ժամանակ, երբ Արծրունին, զինված՝ եւրոպական կրթութեամբ, մտաւ Թիֆլիս, թէ ինչպէս հայերէն լրագիր հրատարակելը, նրա գոյութիւն պահելը անհաւատալի էր թւում մարդկանց, թէ ինչպէս 1847 թ. «Կովկաս» անունով մի փոքրիկ թերթ երկու տարի միայն կեանք ունեցաւ, ապա «Արարատ» շաբաթաթերթը աւելի քիչ, թէ ինչպէս հրապարակ եկան Ս. Նազարեանի և Մ. Նալբանդեանի «Հիւսիսափայլը» 1858 թւին, նրա արծարծած գաղափարների թողած արձագանքը, «Մեղու-Հայաստանի» թերթի ծնունդը և այլն և այլն։ Այնուհետև դասախօսը կանգ առաւ մի շարք շաբաթաթերթերի ծննդի և մահվան վրա ու վերջացրեց «Արարատով», որը, իբրև կրօնական օրգան, պաշտպանութիւն գտնելու շնորհիւ, իբրև պաշտօնական թերթ, մինչև այժմ գոյութիւն ունի։

«Անցեալ դարի յիսնական թւականին առաջին անգամ հայկական ասպարէզի վրա երևացին մի խումբ համակրելի երիտասարդներ, որոնք իրանց միսսիան էին համարում կեանքի վերանորոգումների ծանր աշխատանքը իրանց ուսերի վրա վերցնել։ Դրանց մէջն էին Խ. Աբովեան, Նազարեան, Նալբանդեան, Ռոստոմեան. Դոլախեան, Պատկանեան և այլք։

Այդ երիտասարդները նշանաբան էին ընտրել՝ «...Թափ տանք մեզանից փոշին հնութեան, վերածնենք մեր մէջ նոր կեանք ու նոր բարք»... խօսքերը։ Հէնց այդ նշանաբանով էլ,—ասաց դասախօսը,—հիմնվեց «Հիւսիսափայլը»։ Բայց որովհետև թերթը կտրված էր հայ ժողովրդից, ստիպված եղաւ վեց տարուց վերջ դադարել։ «Հիւսիսափայլի» ծնվելուց 15 տարի յետոյ ծնվեց «Մշակը»։

Ապա յարգելի դասախօսը Ս. Նազարեանի և Գ. Արծրունու մէջ համեմատութիւն դնելով ասաց. «Հիւսիսափայլի» խմբագիրը մի հեզ, հանդարտաբարոյ և կրօնասէր, մեղմ անձն էր, «Մշակի» հիմնադիրը կրակոտ, իր անձնական եսը չափազանց յարգող և եռանդուն երիտասարդ էր, որ իր համոզմունքը առաջ տանելու համար պատրաստ էր մարտնչել ամբողջ հասարակութեան դէմ»։

Այնուհետև դասախօսը առաջ բերեց մի քանի կէտեր Արծրունու այն խօսքերից, որ նա իր գրական գործունէութեան 25-ամեակը տօնվելու ժամանակ ասել էր։

«Այն ուղղութիւնն, որին մենք հետևել ենք, կարող է որոշվել երկու բառով,—պատասխանել է Արծրունին յոբելեանի օրը,—այն է՝ ձգտումն դէպի անհատականութեան զարգացումը. մարդու անհատական զարգացումը նշանակում է կատարեալ և անարգել զարգացում նրա բոլոր բնական, մտաւոր, ֆիզիկական և բարոյական ընդունակութիւնների... Դրանով մարդ աւելի պիտանի է դառնում թէ իր անձին, թէ իր ընտանիքին, թէ համայնքին և թէ իր ազգին ու պետութեան, որի մասն ենք կազմում։

«Պարզ է, որ երբ մարդկային հասարակութեան կէսը՝ արական սեռը միայն քաղաքակրթվում է, զարգանում է, իսկ միւս կէսը՝ իգական սեռը չէ զարգանում, հետևաբար ընտանիքը, որ բաղկացած է մարդուց և կնոջից, չէ կարող հասնել կատարեալ անհատական զարգացման»։

Ա. Սարուխանեանը դասախօսութիւնը աւարտեց երկու մեծ և կարևոր կէտեր յիշելով Արծրունու գործունէութիւնից։ Առաջինը՝ թիւրքահայերի ազատագրական, կեանքի ու գոյքի, պատուի ապահովութեան խնդրի առիթով։ Սարուխանը շեշտեց, որ ինչ որ Ռուսաստանի և արտասահմանի հայ մամուլը այսօր է միակ ելքը համարում թիւրքահայերի փրկութեան համար, նոյնը Արծրունին 1876 թ. էր առաջարկում հայերին, այն է, որ թիւրքահայերի գործին պիտի միջամտի հզօր հարևան պետութիւններից մէկը և այն էլ Ռուսաստանը, որի Պետի եղբօրը, իշխան փոխարքային, Արծրունու նախաձեռնութեամբ հայ հասարակութիւնից աղերսագիր ներկայացրվեց։

«...Արծրունու 34 տարի առաջ ունեցած հայեցակէտն, որ այն ժամանակ փոքրամասնութիւն միայն ունէր իր կողմն, այժմ դարձել է մեծամասնութեան համոզմունքն և բաղձանքը. Դէպքերի զարմանալի զուգադիպութեամբ տեսնում ենք նոյնպէս, որ այս միջնորդութիւնն, որ 34 տարի առաջ մի բարձրադիր անձ զլացել էր յարուցանել, այժմ նոյն բարձր դիրքը գրաւող նրա յաջորդն և անուանակիրը յօժարութեամբ անում է այդ, հանդիսանալով թէ այս կողմի և թէ արտասահմանի իր հօտի իղձերի արտայայտիչը»։

–

Երկրորդ կարևոր հարցը Արծրունու գործունէութիւնից, որի վրա կանգ առաւ դասախօս Սարուխանը, կանանց հարցն է։ Նա ասաց, որ դեռ 1865 թւականից, ուսանող ժամանակից Արծրունին զբաղվել է հայ աղջկայ դաստիարակութեան խնդրով, կնոջ և տղամարդու հաւասարաչափ կրթութեան հարցով, իսկ այնուհետև լայն բացել է

հաւատք չունիմ, վասն զի համոզուած եմ, թէ այն օրը, որ մարդիկ կոչուած են իրենցմէ մէկը դատելու, արդէն անարդար բան մը ըրած են անպատճառ։ Այս խօսքերը պատմիչին և ընկերաբանին կը պատկանին, սակայն որովհետև մեր գործը այսօր քիչ մը պատմութեան կը պատկանի, ասիկա ըսել անհրաժեշտ է։ Գործը տակաւին յետաձգելու առաջարկը համաձայն չէ արդարութեան. այսօր կարելի չէ գտնալ վճիռ մը, որ չորս տարիէ ի վեր արդէն չէ տրուեր, և երբ հիմա պիտի տրուի, նոր առարկութիւններով կուզուի դեռ զայն յետաձգել։ Թող ներուի ինծի դիտել տալ, թէ պ. Շահրիկեանի նոր ամբաստանութիւնները ապաժամ են, հակառակ անոր, որ շատ ծանրակշիռ իրողութիւններ մէջ բերաւ։ Սակայն ամբաստանեալը հոս չէր, որ իրեն ալ միջոց տրուէր անոր իսկութեան վրայ խօսք մը ըսելու, և ներելի չէ բացակայ ամբաստանեալի մը դէմ բերել նոր ամբաստանութիւններ կանգնեցնել, երբ արդէն անոր վրայ ծանրացած ամբաստանութիւնները քննուած և վճիռ մը տրուելու վրայ է։ Ասիկա օրէնքէ դուրս և անիրաւ գործ մըն է։ Դատախազը երբեք իրաւունք չունի վերջին պահուն յանկարծ միջամտելու և նոր ամբաստանութիւններ երևան հանելով յանկարծակիի բերելու։ Ասիկա խղճի դէմ է։ Մենք ոմանք կուզեն անպատճառ ուէ կերպով մը ջախջախել զինքը, իսկ ուրիշները անպատճառ զինքն արդարացնել։ Հակառակ կողմերը հոս պէտք չէ աշխատին իրար համոզելու, զի հոս միայն խղճի արտայայտութիւնն է, որ պէտք է յայտնեն երեսփոխանները, և ես զէթ այդպէս պիտի ընեմ։ Բնաւ մէկը չըսաւ, թէ Օրմանեան ազգին դէմ դաւած, չարաշահութիւն ըրած, դրամական զեղծումներ գործած է, որոնք մէկս յառաջ բերած ըլլան։ Այլ ըսուեցաւ, թէ շատ ստերկամիտ էր և պչրիկ Քամարիլյա մը ունէր։ Ասոնք թէև չափազանցութիւններ են, սակայն ճշմարտութիւններ կան անոնց մէջ։ Սակայն պէտք է նկատել, թէ լրտեսներն հեռացնել իր կարողութեան սահմաններէն դուրս էր, ինչպէս դուրս էր բոլոր բարձր պաշտօնատարներու, մանաւանդ հայոց պատրիարքին։ Օրմանեան սրբազան Ջարդերէն յետոյ պատրիարք եղաւ, և ճիշդ է, թէ համակերպութեան քաղաքականութեան յարեցաւ։ Սակայն դիտելի է, որ հայոց պատմութիւնն արդէն ծայրէ ի ծայր համակերպութիւն մըն է, և ասոր համար է, որ հայք կրցած են բազմազան տիրապետութեանց տակ ապրիլ, եթէ ոչ մինչև հիմա դըրացի ուրիշ ազգերու պէս ջնջուած պիտի ըլլայինք։ Ասոր՝ ոմանք չեն կրնար հաւանիլ, սակայն իրողութիւնը մէջտեղն է։ Պարզապէս կաղնիի և եղէգի առածը։ Կաղնին կը փշրուի, սակայն եղէգը կը տոկայ։ Խնդիր է գիտնալ, թէ եղէգը որքան ծռեցաւ. ոմանք կըսեն, թէ նոյնիսկ ծունկի եկաւ։ Սակայն փաստ չկայ։ «Պէտք էր հրաժարէր և չըրաւ», կըսուի. սակայն ասիկա արդիւնքն էր իր քաղաքականութեան և ասիկա պատճառ չի կրնար ըլլալ դատապարտութեան։ Ասոր մէջ դեր ունէր իր դաստիարակութիւնն ալ։ Օրմանեան եկեղեցականութիւնը կը նկատէ ասպարէզ, մինչ մեր միամիտ եկեղեցականներէն շատերը «կոչում» կը սեպեն զայն։ Օրմանեան՝ պատրիարք ըլլալէ առաջ ամենէն ազգասէր դէմքերէն մէկն էր հայ եկեղեցականութեան, և այս գնահատումը նոր չէ, որ կընեմ, այլ 14 տարիներ առաջ ըրած եմ։ Իմ «Մանօթ դէմքերու» մէկուն նիւթ ընելով զինքը, գիշատող գրաքննութեան ճիրաններուն տակ հասկցնելու համար այս եկեղեցականին յեղափոխական միտումները, ըսած էի. «Օրմանեան եպ. եպիսկոպոսներուն երիտասարդը և երիտասարդներուն եպիսկոպոսն է»։ Արդեօք սխալ էր այդ կարծիքը. չեմ կարծեր։ Անիկա շատ օգտակար գործունէութիւն մը ունեցաւ իբրև սովելոց յանձնաժողովի քարտուղար, երբ Արմաշի դպրեվանքին տեսուչ և մանաւանդ իբր Կարնոյ առաջնորդ։ Անուրանալի է, որ Կարնոյ մէջ առաջին ցնցումը իր օրով եղաւ և շարժման գլուխը ինքն էր։ Օրմանեան Կ. Պոլիս բերուեցաւ և հարցաքննութեան ենթարկուեցաւ։ Իրեն վերագրուած յանցանքներուն մէկ մեծ մասը նկարագրի և ուղղութեան խնդիրներ են, և անոնք պատճառ մը չեն, որ ոմանց համար անիկա սատանայ և ուրիշ համար հրեշտակ մը դառնայ։ Սակայն Օրմանեան՝ երբեմն յեղափոխական՝ ինչպէս կերպարանափոխ եղած էր պատրիարքութեան մէջ։ Շահրիկեան էֆ. պատրիարք ըլլալէ յետոյ զայն տիղմի մէջ մխրճուած կը կարծէ։ Սակայն ինչո՞ւ։ Կը յիշեմ Միրաբօյի մէկ խօսքը, թէ՝ «Ժակօբէն մը մինիստր ըլլալով ժակօբէն ըլլալէ պիտի դադրէր»։ Ես ի՞նչպէս կը մերժեմ հոգեբանութիւնը այս եկեղեցականին, գիտէք. ժամանակներու, շրջապատող պարագաներու վերլուծումով։ Ըսին, թէ սահմանադրութիւնը չգործադրեց և անխախտ պահելու երդումին դէմ դրժեց։ Սակայն կը հարցնեմ, թէ այսօր, երբ ազատութեան մէջ կապրինք, կարելի է տառական կերպով գործադրել։ Այն ամբաստանութիւնն ընողն այսօր անոր գործադրութեան հսկելու պաշտօն ունեցողներէն մէկն է. հարցնենք իրեն, թէ տառական կերպով կը գործադրէ սահմանադրութիւնը։

Գասպարեան.—Գործադրելու վրայ ենք։

Ջօհրապ.—Հինգ տարի է ազատ շրջանի մէջ ենք, և դեռ գործադրելու վրայ ենք. ասիկա կը բաւէ ինծի։ Քիչ մը գործնականութեան սահմաններուն մէջ շարժինք և անոր համեմատ խօսինք։ Անխիղճ բան է խօսելու իրաւունքէ զրկուած մէկու մը դէմ յարձակիլ։ Ամենքս ալ արդարութեան մարմաջն ունինք, սակայն չենք ուզեր մեր խղճին համաձայն շարժիլ։ Ըսուած խօսքերուն մէջ կան նաև ոչ նուազ քաղաքական նկատումներ, որոնք բաւական դեր կը կատարեն, մինչ պէտք չէր, որ անոնք տեղ ունենային։ Ափսոս, Շահրիկեան էֆ. շատ ծանր ու անիրաւ առաջարկ մը կընէ «վայրկեանի պատմական հանգամանքը նկատի առնելով» յետաձգում պահանջելով...

Ատենապետ (ընդմիջելով). — Ցաւալի թիւրիմացութեան մը առարկայ կըլլայ այս պարագան։ Այնպէս մը կուզուի ցոյց տալ, թէ այս խնդիրը դիտմամբ այս օրերուն մէջ կը քննուի, մինչդեռ օրակարգի շարքն էր որ այսպէս բերաւ։

Գ. Ջօհրապ (շարունակելով).—Պէտք չէ անպայման յետաձգել, պէտք է արդարութիւնն ի գործ դնել։ Պատմութեան առջև երբեք չի կրնար արդարանալ չորս տարի մարդ մը չքցնելու համար եղածները։ Լա Հէյի հեռագրին և Կովկասի ժողովին մասին իմ կարծիքս և տպաւորութիւններս պիտի յայտնեմ։ Ես կը հաւատամ, թէ Իզմիրլեան այդ հեռագիրը պիտի քաշէր, Օրմանեան քաշած է, սակայն անիկա դատապարտութեան պատճառ չի կրնար ըլլալ։ Եւ ինչ խորհրդաւոր գիպուած. ով գիտէ թէ այս պատմական օրերուն չպիտի յաջորդեն օրեր, ուր նորէն այդ հեռագիրները քաշելու պիտի ստիպուինք։ Իսկ հեռագիրը ստացող պետութիւններն այնքան միամիտ կը կարծենք, որ չհասկնան, թէ անիկա պատանդ մըն է բռնակալէն առնուած։ Կովկասի ժողովի մասին ըսածներն եթէ ճիշդ ըլլային, չպիտի վարանէի դատապարտութիւնը պահանջել, սակայն միամտութիւն է կարծել, թէ Կովկասի մէջ կազմուած ժողովի մը հանգամանքին համար հոն աղբիւր չունենայ ռուս կառավարութիւնը և Կ. Պոլսոյ պատրիարքին դիմէ։ Էջմիածնայ մէջ պրօկուրօրին պաշտօնը ինչ է։ Ասիկա անըմբռնելի է։ Եւ պէտք է նկատի առնել, թէ պետական պաշտօնեաները սովորութիւն ունին միշտ դէպքերը իրենց կառավարութեան տեսակէտէն դատելու, և անոր համար Թարգմանին խօսքերը ճիշդ ընդունիլ կարելի չէ։ Օրմանեան սրբազանի հերքումը արդէն շատ բացորոշ է և տարակոյս չի վերցներ։ Գալով Տէրունեանի խնդրոյն, ես հոն կը տեսնեմ օրինական ծանր անկանոնութիւններ և թերացումներ։ Ամուսնալուծման վճիռը կը յենու կոնդակի մը վրայ, որ ոչ արդիւնքն է դատաս. խորհուրդին քննութեան և ոչ ալ կնոջ բողոքին։ Կաթողիկոսը՝ մանաւանդ թիւրքահայոց ամուսնական գործերու համար լոկ վճռաբեկ ատեան մըն է. առանց սակայն նախադատ ատեաններու վճռին՝ անիկա չի կրնար ինքնակամ վճիռ արձակել։ Հետևաբար Օրմանեան սրբազան, որ պէտք չէր անգիտանար այս կարգ ու սարքին, ծանր անկանոնութիւն մը գործած է։ Նոյնպէս ես չեմ կարծեր, թէ մենէ ոչ ոք պաշտպանելու. Նկրտի իր միւս գիրը, որ ծանր թերացում մըն է։ Սակայն ես դիտել տալով իր շատ մը ծառայութիւնները նախ քան պատրիարք ըլլալն և անկէ յետոյ, չորս տարուան լռին քաւութիւնը, իր այս թերացումներուն դէմ, կառաջարկեմ անպարտ արձակել զինքն իր վրայ ծանրացող ամբաստանութիւններէն և, եթէ կարտօնէք, պատրաստ եմ կարդալ իր մասին գրի առած մէկ բանաձև։

Ապա ժողովը 26 ձայնով ընդդէմ 5-ի վճռել է վիճաբանութիւնները փակել։

Շահրիկեան քուէարկութեան միջոցին յայտնել է, թէ ինքն ու իր ընկերները որոշել են ձեռնպահ մնալ Օրմանեանի արդարացման կամ դատապարտման խնդրին պատկանող բոլոր քուէարկութիւնների միջոցին։

Այնուհետև Գր. Ջօհրապ կարդացել է իր մի երկար բանաձևը, որով «ազգ. ժողովը կը վճռէ ազատ կացուցանել Օրմանեան սրբազանն իրեն դէմ եղած բոլոր ամբաստանութիւններէն»։

Ջօհրապի բանաձևի քուէարկութեան միջոցին մի քանի հոգի նորից օբստրուկցիա են սարքել, այնպէս որ ազգ. ժողովի այս նիստն էլ, առանց եզրակացութեան յանգելու, ստիպվել է ցրվել։

«Մշակի» էջերը յօդուած կանանց իրաւունքների։

«Թէ որքան կարևոր դեր է կատարել Արծրունին այս խնդրում,—ասաց դասախօսը,—այդ երևում է այն պատկառելի ժողովածուից, որ Թիֆլիսի կանանց յոբելեանական յանձնաժողովը հրատարակել է այս տարի, «Մշակի» 40-ամեակի տօնման առիթով, «Մշակը և հայ կինը» վերնագրով։ Ահա ինչպէս են բացատրում յարգելի հրատարակչուհիները այս գիրքը. «Մշակը»,—վկայում են տիկինները,—առաջինը զարթեցրեց հայ կնոջ մէջ ինքնաճանաչութեան զգացմունքը և լայնացրեց նրա աշխարհայեացքը։ Նա հանդիսացաւ իրաւազուրկ հայ կնոջ պաշտպանը. նա առաջինը ծանօթացրեց հայ կնոջը՝ լուսաւորեալ ազգերի կանանց գործունէութեան հետ։ Նա դուրս հանեց հայ կնոջը ընտանեկան նեղ շրջանից հրաւիրելով նրան հասարակական գործունէութեան լայն ասպարէզը»։

Դասախօսը վերջացրեց հետևեալ խօսքերով. «Թող միշտ կենդանի մնայ մեր մէջ Գր. Արծրունու յիշատակը, և խնդրում եմ ձեզ, տիկնայք և պարոններ, յոտնկայս յարգէք նրա յիշատակը»։

Վերջին խօսքերի հետ ամբողջ դահլիճի հասարակութիւնը մի մարդու պէս ոտքի կանգնեց, գլուխը խոնարհեց կրծքին։

Յիշատակը յարգելուց յետոյ, հանդիսականները բուռն ծափահարութեան տակ բեմ խնդրեցին Սարուխանին և շնորհակալութիւն յայտնեցին այնքան գեղեցիկ կերպով կազմած դասախօսութեան համար։

Այնուհետև սկսվեց «Մշակի» 40-ամեակի առիթով և յօգուտ «Մշակի» ֆօնդին Բագուի Հ. Կ. Միութեան գեղարուեստական սեկցիայի կազմած ներկայացումը տիկ. Սերբանոյշի ղեկավարութեամբ։

Ներկայացրին Գօրդինի «Սէր և մահ» դրաման 4 արար. Զանբազեանի թարգմանութեամբ։

Ներկայացումը անցաւ բաւական աջող։

Արծրունու թաղման տարելիցին պատարագ և հոգեհանգիստ կը կատարվի։

Ս. Գարագաշ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Երէկ և այսօր լոյս չը տեսան ռուսաց լեզուով հրատարակվող օրաթերթերը՝ տօների պատճառով։

◆ Ստացանք եղբարք Եսայեաններից 10 րուբլի՝ առաջիկայ տօներին աղքատներին բաժանելու համար, ի յիշատակ իրանց հանգուցեալ մօր՝ Խաթուն Եսայեանի մահվան 40-օրեակի, որ լրանում է յունվարի 2-ին 1913 թ.։

◆ Էջմիածնից լուր է ստացված, թէ Կաթողիկոսը հաստատել է Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան կէս կազմի վերջին ընտրութիւնները։

◆ Դեկտեմբերի 25-ին, Քրիստոսի Ծննդեան օրը, զանազան պաշտօնական անձինք այցելեցին Վրաստանի էկզարխ Իննօկէնտի արքեպիսկոպոսին։

◆ «Լոյս» շաբաթաթերթը հաղորդում է, որ Նոր-Նախիջևանի թեմական դպրոցի մանկավարժական ժողովը որոշել է Էջմիածնի մէջ կազմված դպրոցական ֆօնդին յատկացնել իր ստացած ամսական ռոճիկից մէկ տոկոսը, մինչև այս ուսումնական տարվայ վերջը, որ կը կազմէ ամսական 18 րուբլի։

◆ Վաղը, ուրբաթ, դեկտեմբերի 28-ին։ Գրական Գեղագիտական Սալօնում տեղի կունենայ երեկոյթ, նուիրված Ստեփաննոս Նազարեանի յիշատակին։ Կը լինեն բանախօսութիւններ և երաժշտական նուագածութիւններ։ Առանձին հրաւէրներ չեն ուղարկվի։

◆ Մեզ հաղորդում են, որ ներկայումս դանիական եղանակով սկսված է կաթնատու կովերի խնամատարութիւն Բագւում և Թիֆլիսի շրջակայքում։ Փորձերը տալիս են աջող արդիւնք։ Բագւում փորձերը կատարվում են երկու տնտեսութեան մէջ։ Թիֆլիսի շրջակայքում փորձեր եղել են հինգ կէտերում։

◆ Կիրակի, դեկտեմբերի 30-ին, Կ. Հ. Բ. Ընկերութեան դահլիճում կայանալու է Թիֆլիսի Հայոց Երաժշտական Ընկերութեան առաջին ընդհանուր ժողովը, ուր հիմնադիրները կը զեկուցեն կանօնադրութեան հաստատման մասին և կը կատարվեն վարչական անդամների ընտրութիւնները։

◆ Պրոֆ. Գրևզէնկովը Բագւում կարդալու է իր դասախօսութիւնները յունվարի 2-ին և 3-ին։

◆ Վաղը Բագուի դուման վերջնականապէս ընտրելու է քաղաքագլուխ Բագու քաղաքի համար։

◆ Բագւում դեկտեմբերի 23-ին կայացել է տ. Ազամեանի նախագահութեամբ Բ. Հ. Կուլտ. Միութեան հրատարակչական սեկցիայի հրաւիրած անձերի խորհրդակցութիւնը բանաստեղծ Յ. Յովհաննիսեանի գործունէութեան 30-ամեայ յոբելեանը տօնելու հարցի մասին։ Մտքերի փոխանակութիւնից յետոյ վճռվել է ընտրել 10 հոգուց բաղկացած մասնաժողով կօօպտացիայի իրաւունքով։

◆ Կարսից մեզ գրում են հետևեալը դեկտեմբերի 25-ից. «Անցեալ տարի այս ժամանակ լինում էին մեղմ և անուշ օրեր։ Արևգակը կարգին տաքացնում էր զբօսնողներին։ Իսկ այս տարի զարհուրելի սառնամանիքներ է լինում։ Այս պատճառով չափից դուրս գոհ են սառուցի վրա սահող քնքոյշ օրիորդները և նազելի տիկինները. իսկ վառելիք չունեցող աղքատները ցուրտ խրճիթների մէջ տանջվելով սպասում են գարնան գալուն»։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ. ԱՐ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՑԵՐՏ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Մոսկվա, 10 դեկտեմբերի

Կիրակի, ամսիս 9-ին, կօնսերվատօրիայի փոքր դահլիճում կայացաւ Եղիշէ Բաղդասարեանի կօնցերտը։

Հայկական երեկոյթներն ու կօնցերտները միշտ ուրախալի և բացառիկ երեկոյթ համարելով Ռուսաստանի սիրտը կազմող Մոսկվայի հայ գաղութի համար, կօնցերտ կազմակերպողները իրաւունք ունեն դժգոհելու, որ, այսպէս կոչված, բարձր ինտելիգենցիան ու բուրժուազիան բացակայում էին այդ երեկոյ։

Հասկանալի է, որ Եղիշէ Բաղդասարեանի կօնցերտը չէր կարող համեմատվել հռչակաւոր ռուս երգիչ-երգչուհիների կօնցերտների հետ և նա յաւակնութիւն չէր ունենայ այդպիսի յանդուգն միտք յղանալու. բայց չը պէտք է մոռանալ, որ նման կօնցերտներն էլ ունեն իրանց ուրոյն գեղարուեստական հաճոյքը, որին անզօր են փոխարինել նմանապէս անուանի ռուս կոմպօզիտօրների ամենակատարեալ խմբերը։

Այդ օրը երգվեցին հայկական ազգային ու ժողովրդական երգեր, որոնք նոյնպէս ընդունակ են գեղարուեստական բաւականութիւն պատճառելու և տպաւորութիւն գործելու, եթէ գործադրված է բարեխիղճ և խելացի աշխատանք։

Եւ Մոսկվայի հայ վերին դասակարգը, որ աշխարհային աղմկալից կեանքից խոնջացած ականաւոր ռուս դերակատարների կատարելութեան հասցրած խաղի և կամ երգի ու երաժշտութեան քաղցրահնչիւն ելևէջների տպաւորութեան տակ յաճախ մոռացութեան է ուզում տալ իր երկրային գոյութիւնը և մուզիկայի ներդաշնակութեան հետ միասին օդում լողալ, նա իր ներկայութեամբ այդ օրը պարտաւոր էր յարգել ու խրախուսել մայրենի երգն ու երաժշտութիւնը և նրա վաստակաւորների թէկուզ համեստ աշխատանքը։

Եւ անիրաւ չենք լինի, եթէ ասենք, որ Ե. Բաղդասարեանը գործադրել էր բարեխիղճ աշխատանք։

Երգում էր հայոց եկեղեցու խումբը հենց իրան հիմնադիր՝ Ե. Բաղդասարեանի ղեկավարութեամբ։

Խումբը փոքրաթիւ էր, բաղկացած ընդամենը 20—25 հոգուց։

Երգեցին «Ահա ծագեց կարմիր արև» (Եկմալեանի), «Անուշ» օպերայից (Բաղդասարեանի), «Ախ դու բաղդաւոր», «Սարերի վրով գնաց», «Այս գիշեր» (Կոմիտասի), «Ալագեազ» (Կարա-Մուրզայի), «Համր երգ» (Բաղդասարեանի) և «Կործանվեց» (Բաղդասարեանի) երգերը։

Երգերը հնչում էին խաղաղ և ներդաշնակ, բայց ոչ հոգեզունց. դահլիճը լիովին չէր համակվում։ Երգերն անպայման թողնում էին տպաւորութիւն, սակայն ոչ զօրեղ։ Երգողներն իրանք աւելի վստահ ու ներշնչված սկսեցին երգել վերջերում, անհամեմատ տպաւորիչ հոգեզունց երգեցին ու կրկնեցին «Զենք, չենք երջանիկ» կտորը, որ բուռն ծափեր վաստակեց։ Համեմատաբար ուժեղ էր հնչում առաջին ձայնը, որ շատ տեղերում խլացնում էր միւսներին. այդ հանգամանքն էլ պիտի բացատրել միւս ձայների սակաւութեամբ։ Ձայների պակասն անպայման մնում էր, բայց այդ ի հարկէ չէր կարող նսեմացնել ընդունակ խմբապետի ջանքերն ու ստացված լաւ արդիւնքը։

Տպաւորիչ էին նաև պ. Ասպերհերի նուագները վիօլօնչէլի վրա. հասարակութիւնը ուշադիր էր և վարձատրում էր ծափահարութիւններով։

Ջութակի վրա նուագում էր պ. Կամենցեվ գեղեցիկ և վարժ. հասարակութիւնը քանիցս կրկնել տուեց։

Խմբական երգչուհիներից սօլօ երգեցին օր. օր. Կալյանջեան և Ակսայեան. թէ առաջինի և թէ երկրորդի երգածներն էլ գոհացուցիչ էին։

Երգիչներից սօլօ երգեց պ. Ալլահվերդեան և դուէտ օր. Կալյանջեանի հետ «Հարբբանը» (Կոմիտասի)։ Իմ յիշողութեան մէջ վերակենդանացան Կոմիտասի կօնցերտները, ուր նոյն «Հարբբանը» հնչում էր այնքան հարազատ ժողովրդական մոտիվներին ու այնքան համակող իր զգայուն շեշտերով։

Կօնցերտն ընդհանրապէս անցաւ աջող. հասարակութիւնը բոլորին էլ ծափահարում էր. մեղմ տպաւորութիւնների տակ և գոհ սրտով հեռացաւ նա դահլիճից։

Կօնցերտը հայկական սովորութեան համաձայն ամբողջ մի ժամ ուշ սկսվեց, այն է՝ ժամը 10-ին։

Գահ

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Կ. Պօլսում երևան հանվեց նոր դաւադրութիւն ներկայ կառավարութիւնը տապալելու նպատակով։ Սպասվում է Քեամիլ փաշայի կաբինետի անկումը և դիկտատուրա հաստատվելու ազդարարութիւն։

◆ Բ. Դուռը զիջում է դաշնակից պետութիւններին 125,000 քառ. կիլոմետր իր երկրից 387,000 ազգաբնակութեամբ. իսկ ամբողջ Եւրոպական Թիւրքիան գրաւում է այժմ 169,300 քառ. կիլօմետր 6,500,000 ազգաբնակութեամբ։

◆ «Times»-ին հեռագրում են Սօֆիայից, որ թիւրք և բուլղար զինւորական իշխանութիւնների միջև սկսվել են բանակցութիւններ Ադրիանուպոլսի գրաւման մասին։

◆ Գարնանը Ռուսաստան է գալու ռումինական թագաւորը։

◆ Ադրիանուպոլսի դրութիւնը կրիտիքական է։ Զինված ազգաբնակութիւնը զօրահրամանատարից պահանջում է յանձնել բերդը բուլղարներին։

◆ Շուտով Թէհրան է մտնելու Սալար-ուդ-Դովլէն, որին պարսից կառավարութիւնը համաձայնել է վճարել 20,000 թուման և վերադարձնել գրաւված կալուածքները։

◆ Ներքին գործերի նոր մինիստր Մակլակովը մօտիկ ապագայում մի շարք ճանապարհորդութիւններ է ձեռնարկելու. գաւառներում տեղական վարչական գործունէութեան հետ ծանօթանալու համար։

◆ «Веч. Вр.» հաղորդում է, որ հրաժարական է տալիս ժանդարմների առանձին կորպուսի հրամանատար գ. Տօլմաչևը, որին փոխարինելու է Մոսկվայի նահանգապետ Ջունկովսկին, որը և միևնոյն ժամանակ կը վարէ ներքին գործերի մինիստրի օգնականի պարտականութիւնները։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Սա տարօրինակ է թւում, սակայն ճշմարտութիւն է։

Միանգամայն ծրի դեղատոմս։

Էլեկտրաքարշում նստած երկու բանուորի խօսակցութիւնը.

— Վօլկօվը նորից աշխատանքի է։

— Անկարելի է։ Անցեալ կիրակի ես նրա մօտ էի. նրա տանջանքները սարսափելի էին։ Բժիշկն ասում է, որ նրա հիւանդութիւնը իշիաս է կամ թէ դրա նման մի բան, այն էլ շատ սուր բնաւորութեան, և որ նա կարող է ամիսներով անկողնում ընկած մնալ։

— Նշանակում է, բժիշկը սխալվել է, որովհետև ես տեսայ Վօլկօվին, երբ նա վերադառնում էր աշխատանքից, և նա ասում էր, որ երբէք իրան այնքան լաւ չէ զգացել, որքան այժմ։

— Ի՞նչ է արել նա։

— Նա ինձ ասաց, որ մի ձրի դեղատոմսով է բժշկվել, որը կտրել է լրագիրներից մէկից։ Իմ տանտիրուհին որովհետև յօդացաւով բռնված է, ուստի ես խնդրեցի նրանից այդ դեղատոմսը։ Ահա նա. «Գնացէք մօտակայ դեղատներից կամ դեղավաճառանոցներից մէկը և գնէք 60 գրան Նէֆալդօլ-Մտօր 12 տաբլէտկաներում։ Երկու տաբլէտկան ընդունէք միանգամից անօթի, իսկ այնուհետև իւրաքանչիւր ժամը մի անգամ մի-մի տաբլէտկա, մինչև որ ցաւերը կանցնեն»։ Նա ասում էր, որ այդ է նրան բժշկել, և եթէ իմ տանտիրուհուն այդ չօգնէ, խոստանում է շաբաթ երեկոյեան մի հիւրասիրութիւն սարքել։ (П. 156401) (№ 8)

Վաճառվում է
Գ. ԷԴԻԼԵԱՆԻ
„Քննադատութիւն Ցիլլերի աստիճանների“
գիրքը։ Գինն է 50 կոպ.։ Դիմել գրավաճառներին կամ հեղինակին՝ Эчміадзинъ. Академія. Г. Эдиляну.
(հ.կ.) 983. 3—1

ԷԺԱՆ ԱՆԿԱՐԵԼԻ Է!
22 րուբլու փոխարէն — միայն 2 ր. 25 կ.

ТРЕБУЙТЕ ИСКЛЮЧИТЕЛЬНО
ЧАСОВЪ ИЗЪ ГЕРМАНИИ ОТЪ ЯКУБОВИЧА

Անկէր ժամաց., I տես. պատենտ, (ոչ ցիլինդր), ուղարկում ենք վերադիր վճարով, առանց կանխավճարի։ Տղամ. գրպանի էլէգանտ ժամացոյց անգլիական սև պողպատից № 419, ընթացքը ձայնեղ, 16 քարով, լարումը կոթից 46 ժամը մի անգամ, փոշուց պահպանող ապակիով, զսպանակը կոտրվելուց պահպանող առարկայով։ Գինը՝ կարճ ժամանակով՝ 2 ր. 25 կ., 2 հատը 4 ր., 3 հատը 5 ր. 70 կ., 5 հատը 9 ր. 25 կ., 8 հատը 14 ր. 40 կ.։ Կանացի ժամացոյց 1 րուբլով թանկ։ Ժամացոյցներին կցված է երաշխաւորութիւն 20 տարով։ Մաքս և ճանապարհածախք 45 կ., Սիբիր՝ 75 կ.։ Պահանջներն ուղղել ռուսերէն լեզուով։ Հասցէն կտրել և կցնել ծրարին կամ բացիկին։

Германія—БЕРЛИНЪ—Панков. ул. Гартвигштрасе 24.
Торг. Дому Ю. Якубовичу—24.
BERLIN—Pankow. Hartwigstr. 24.
I. Iakubowicz—24.

Բերլին ուղարկվող նամակներին կպցնել 10 կ., իսկ բացիկին 4 կոպէկանոց մարկաներ։
Բազմաթիւ շնորհակալ. նամակներ։ Էլեգանտ շղթայ հատը 50 կ. և 75 կ., երկկողմ շղթայ՝ նոր, չը սևացող ոսկուց՝ հատը 1 ր. 50 կ., 2 ր. 15 կ. և 3 ր. 50 կ.։
(27) (Вил. 76292) 2—2

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱԽԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
Ն. Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
(Գոյութիւն ունի 1895 թ.)

Հեղինակ առևտրական հաշւապահութեան ձեռնարկի և զանազան մասնագիտական ձեռնարկների։ Տալիս է երկու սեռի անձանց մասնագիտական առևտրական գիտութիւն 4-ամսեայ դասընթացքում, ամենօրեայ պարապմունքներով։

Դասընթացքներում անցնում են.—Առևտրական և արդիւնաբերութեան զանազան ճիւղերի հաշւապահութիւն, նաւթարդիւնաբերութեան և նաւթագործութեան ճիւղի հետ միասին, զանազան սիստեմներով, կատարեալ իւրացումն կրկնակի իտալական սիստեմով և առևտր. թւաբանութիւն, առևտր. նամակագրութիւն, մուրհակային և առևտրական իրաւունքներ, քաղաքատնտեսութիւն, վատ ձեռագրի ուղղումն։

Ոչ պարտադիր առարկաներն են՝ 1) Օտար լեզուներ, 2) Ստենոգրաֆիա (սղագրութիւն) և 3) Ռեմինգտօնի վրա գրել։

Ուսուցիչները բարձր կրթութիւն ստացած մասնագէտներ են, որոնք գործնականապէս և տեսականապէս պատրաստված են ամեն մի առարկայի համար առանձին։

Վկայագրերը տրվում են մինիստրութեան թոյլտւութեամբ։

Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ից։ Խնդրագրերների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 9—11-ը, երեկոյեան 5—7-ը։ Ծրագիրը և կանոնները տրվում և ուղարկվում են ձրիաբար։ Դասընթացքներին կից հաստատված են քիչ պատրաստված անձանց համար առանձին պատրաստողական և լրացուցիչ դասարաններ ռուսաց լեզուի և թւաբանութեան համար։

Անձամբ և նամակներով դիմել՝ Тифлисъ, Учредит. Бухг. Курсовъ Н. В. Абраамяну, Николаевская, 22, Телефонъ 7—44.
(կ. հ. ե.) 916. 0-8

Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի Խորհրդարանում

(Ներսեսովսկ. փ., № 3) այս տարվայ դեկտ. 27-ին, հինգշաբթի, ցեր. ժ. 2-ին նշանակված է ԱՃՈՒՐԴ կապալով տալու դպրոցապատկան կալուածները փակ ծրարների միջոցով։ Աճուրդի չը հաստատելու իրաւունքը Հոգաբարձութիւնը վերապահում է իրան։
(կ.ե.հ.) 969. 4—4

ԷԼԵՔՏՐՈ-ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ՊԱՀԵՍՏ
Կ. Յ. ԳՈՒՐԳԷՆՈՎԻ
ԵՒ Գ. Յ. ԲԷԳՕՎԻ
ԹԻՖԼԻՍ, Սերգիէվսկայա փող. 4.

սրանով յայտնում է ի տեղեկութիւն իր յարգելի գնորդների, որ, ի նկատի ունենալով որ առաջիկայ 1913 թ. յունվարից ամբողջ գործը անցնում է նոր ֆիրմայի՝

„Եակօվ Սեմեօնօվիչ Բէգօվ“ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ,

ներկայ դեկտեմբ. 10-ից մինչեւ յունվ. 1-ը 1913 թ. նշանակված է
ՄԵԾ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ
բոլոր գեղարուեստական արմատուրների, այն է՝ ջահերի, պլաֆօնների, սեղանի լամպաների, բրակէտների և այլն, նոյնպէս և էլեքտրական լուսաւորութեան վերաբերեալ բոլոր նիւթեղէնների
20-ից մինչեւ 40 տոկոս զեղչով
Յարգանօք՝ Կ. ԳՈՒՐԳԷՆՕՎ և Գ. ԲԷԳՕՎ
(ե.հ.շ.) 950. 6—6

Առեւտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միքայէլեան պր. 24/4. Տէլէֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։

Գործնական զբաղմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են բէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանօնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն). բ.) ոչ-պարտադիր. 1) **Օտար լեզուներ.** 2) Սղագրութիւն. 3) Դակտիլլօգրաֆիա (ռեմինգտօն և ուր. և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և դաս-դաս։ Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշւապահներ, օգնականներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունելութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 228 ունկնդիր, որոնցից 42 հոգի իգական սեռից)։

Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(ա. օ.) 876. 0—15

Торговая школа съ правами и Бухгалтерскіе курсы
по программамъ высшихъ Петерб. курсовъ Об. Рас. Ком. Зн.
Ивана Зах. Теръ-Степанова.
Начало занятій въ Торговой 7 января, а на курсахъ 15 января. Михайловскій пр. д. № 53
(օ. մ.) 979. 10—2

ԲԱՑՎԱԾ Է 1913 ԹՒԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ՀՈՎԻՏ
ԱԶԳԱՅԻՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ
շաբաթաթերթ
Հրատարակութեան VIII տարի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ		
	Տարեկան	4 ր. —
	Կէս տարվան	2 ր. 50 կ.
	Ամսական	— 50 կ.

Արտասահման տարեկան՝ 12 ֆր., կէս տարվան՝ 7 ֆր.։
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Խմբագրութեան հասցէն՝ Редакція армянскаго журнала «ОВИТЪ», Тифлисъ. Արտասահմանից՝ Rédaction du journal arménien «HOVIT», Tiflis, (Caucase, Russie).
(օ. մ.) 929. 10—7

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный